



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ԽՈՐՀՈՒՐԴ

### ՈՐՈՇՈՒՄ

9 հոկտեմբերի 2013 թվականի

**թիվ 67**

քաղ. Կազան

#### **«Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մասին**

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Ընդունել կից ներկայացվող «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 033/2013):

2. Սահմանել, որ «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն (ՄՄ ՏԿ 033/2013) ուժի մեջ է մտնում 2014 թվականի մայիսի 1-ից:

3. Մինչեւ «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն (ՄՄ ՏԿ 033/2013) ուժի մեջ մտնելու օրը Ռուսաստանի Դաշնության Կառավարությանը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ նախապատրաստել նշված տեխնիկական կանոնակարգում կատարված փոփոխությունները սահմանված կարգով ընդունելուն՝

վերականգնված կաթը սպառողական տարայում բաժնեծրարված եւ իր մականշվածքին համապատասխան կաթնամթերքի շարքին դասելու հետ կապված դրույթներ սահմանելու մասին ընդունված որոշմանը համապատասխան:

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝**

<b>Բելառուսի Հանրապետությունից՝</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից՝</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից՝</b>
---	--	--------------------------------------

**Ս. Ռումաս**

**Բ. Սագինտաեւ**

**Ի. Շուվալով**

## ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 67 որոշմամբ

### Մաքսային միության

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

#### «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին»

(ՄՄ ՏԿ 033/2013)

Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող կաթի եւ կաթնամթերքի անվտանգությանը, դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման ու օգտահանման (ուտիլիզացման) գործընթացներին, ինչպես նաեւ դրանց ազատ տեղափոխումն ապահովելու համար կաթի եւ կաթնամթերքի մականշվածքին ու փաթեթվածքին ներկայացվող՝ Մաքսային միության մաքսային տարածքում կիրառության եւ կատարման համար պարտադիր պահանջները:

Այն դեպքում, երբ կաթի եւ կաթնամթերքի վերաբերյալ ընդունվել են Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր, որոնցով սահմանվում են կաթի եւ կաթնամթերքի անվտանգությանը, դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման ու օգտահանման գործընթացներին ներկայացվող

պահանջները, ինչպես նաև դրանց մականշվածքին եւ փաթեթվածքին ներկայացվող պահանջները, կաթն ու կաթնամթերքը, դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ օգտահանման գործընթացներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև դրանց մականշվածքին ու փաթեթվածքին ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն Մաքսային միության բոլոր այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

## I. Կիրառության ոլորտը

1. Սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է մարդու կյանքի եւ առողջության, շրջակա միջավայրի, կենդանիների կյանքի եւ առողջության պաշտպանության, դրանց նշանակությանը եւ անվտանգությանը վերաբերող՝ կաթի եւ կաթնամթերքի սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելման նպատակով եւ տարածվում է Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող կաթի եւ կաթնամթերքի, դրանց արտադրության, պահման, փոխադրման, իրացման ու օգտահանման գործընթացների վրա:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող եւ սննդային նպատակներով օգտագործող կաթի եւ կաթնամթերքի վրա, այդ թվում՝

ա) հում կաթ՝ հումք, յուղագերծված կաթ (հում եւ ջերմամշակված)՝ հումք, սերուցք (հում եւ ջերմամշակված)՝ հումք.

բ) կաթնամթերք, այդ թվում՝

կաթնային մթերքներ,

կաթնային բաղադրյալ մթերքներ,

կաթ պարունակող մթերքներ,

կաթի վերամշակումից ստացվող կողմնակի մթերքներ,

մանկական սննդի համար արտադրանք՝ կաթնային հիմքով՝ վաղ տարիքի (0-ից մինչև 3 տարեկան), նախադպրոցական տարիքի (3-ից մինչև 6 տարեկան), դպրոցական տարիքի (6 տարեկան եւ ավելի) երեխաների համար նախատեսված, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներ (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդներ, կաթնային ըմպելիքներ (այդ թվում՝ չոր)՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված, կաթնային շիլաներ՝ օգտագործման համար պատրաստի, չոր կաթնային շիլաներ (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի)՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված.

գ) կաթի եւ կաթնամթերքի արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ օգտահանման գործընթացներ.

դ) ֆունկցիոնալ բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ են կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար:

3. Սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում հետեւյալ արտադրատեսակների վրա.

ա) կաթի եւ կաթնամթերքի հիմքով պատրաստված մթերքներ, որոնք նախատեսված են հատուկ նշանակության սննդի մեջ օգտագործվելու համար (բացառությամբ մանկական սննդի համար նախատեսված կաթի եւ կաթնամթերքի).

բ) խոհարարական արտադրատեսակներ եւ հրուշակեղեն, սննդային եւ կենսաբանորեն ակտիվ հավելումներ, դեղամիջոցներ, կենդանիների համար նախատեսված կերեր, կաթի եւ կաթնամթերքի օգտագործմամբ կամ դրանց հիմքով պատրաստված ոչ սննդային ապրանքներ.

գ) քաղաքացիների կողմից տնային պայմաններում եւ (կամ) անձնական օժանդակ տնտեսություններում ստացված կաթ ու կաթնամթերք, ինչպես նաեւ

միայն անձնական օգտագործման համար նախատեսված եւ Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելու համար չնախատեսված կաթի եւ կաթնամթերքի արտադրության, պահման, փոխադրման ու օգտահանման գործընթացներ:

4. Սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են կաթի եւ կաթնամթերքի մականշվածքին եւ փաթեթվածքին ներկայացվող՝ Մաքսային միության մաքսային տարածքում կիրառության եւ կատարման համար պարտադիր պահանջները, որոնք լրացնում են Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ հաստատված «Մննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 022/2011) (այսուհետ՝ «Մննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 022/2011)) եւ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ հաստատված «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 005/2011) (այսուհետ՝ «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 005/2011)) պահանջները եւ չեն հակասում դրանց:

## II. Հիմնական հասկացությունները

5. Սույն Տեխնիկական կանոնակարգը կիրառելու նպատակով օգտագործվում են հասկացություններ, որոնք սահմանված են Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ հաստատված «Մննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 021/2011) (այսուհետ՝ «Մննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 021/2011)), «Մննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով (ՄՄ ՏԿ 022/2011), ինչպես նաեւ հետեւյալ հասկացություններն ու դրանց սահմանումները.

«այրան»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է խառը (կաթնաթթվային եւ սպիրտային) խմորման միջոցով՝ օգտագործելով մերանային միկրոօրգանիզմներ (ջերմասեր կաթնաթթվային ստրեպտոկոկներ, բուլղարական կաթնաթթվային ցուպիկներ) եւ խմորասնկեր, ավելացնելով կամ չավելացնելով ջուր, կերակրի աղ,

«ալբումին»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է կաթնային շիճուկից եւ կաթի շիճուկային սպիտակուցների խտանյութ (կոնցենտրատ) է,

«ացիդոֆիլին»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է մերանային միկրոօրգանիզմների (ացիդոֆիլային կաթնաթթվային ցուպիկների, լակտոկոկների եւ կեֆիրային սնկերի հիմքով պատրաստված մերանների) հավասար հարաբերակցության օգտագործմամբ,

«մածուն (վարենեց)»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է նախապես մանրէագերծված կամ  $97^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում այլ ջերմամշակման ենթարկված կաթի եւ (կամ) կաթնամթերքի թթվեցման միջոցով՝ օգտագործելով մերանային միկրոօրգանիզմներ (ջերմասեր կաթնաթթվային ստրեպտոկոկներ), մինչեւ բնորոշ զգայորոշման (օրգանոլեպտիկ) հատկանիշներ ձեռք բերելը,

«վերականգնված կաթ»՝ սպառողական տարայում բաժնեծրարված կաթնային մթերք կամ կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված հումք՝ բացի խմելու կաթից, որն արտադրվել է կոնցենտրացված կամ խտացրած կամ չոր կաթնային մթերքից եւ ջրից,

«երկրորդային կաթնային հումք»՝ կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերք, կաթնային մթերք, կաթնային բաղադրյալ մթերք, կաթ պարունակող մթերք՝ մասամբ կորցրած նույնականացման հատկանիշներով կամ սպառողական հատկություններով (այդ թվում՝ մթերքներ, որոնք հետ են կանչվել իրենց պիտանիության ժամկետների սահմաններում, համապատասխանում են պարենային հումքին ներկայացվող անվտանգության պահանջներին), որոնք նախատեսված են վերամշակումից հետո օգտագործման համար,

«կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված մերաններ»՝ հատուկ ընտրված ու կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար օգտագործվող ոչ ախտածին, ոչ թունածին միկրոօրգանիզմներ եւ (կամ) միկրոօրգանիզմների խմբեր (հիմնականում կաթնաթթվային),

«հատիկավոր կաթնաշոռ»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք, որն արտադրվել է կաթնաշոռային հատիկներից՝ ավելացնելով կամ չավելացնելով սերուցք, կերակրի աղ եւ այլ ոչ կաթնային բաղադրիչներ, որոնց ներմուծման նպատակը կաթի բաղադրիչները փոխարինելը չէ,

«յոգուրտ»՝ թթվակաթնային մթերք՝ կաթի չոր յուղազերծված նյութերի բարձր պարունակությամբ, որն արտադրվել է մերանային միկրոօրգանիզմների (ջերմասեր կաթնաթթվային ստրեպտոկոկների եւ բուլղարական կաթնաթթվային ցուպիկների) օգտագործմամբ,

«կազեին»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է յուղազերծված կաթից եւ կաթի սպիտակուցների հիմնական զտամասն է,

«կազեինատ»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է կազեինից՝ ակալիական մետաղների հիդրօքսիդների կամ դրանց աղերի լուծույթներով մշակման եւ չորացման միջոցով,

«կեֆիր»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է խառը (կաթնաթթվային եւ սպիրտային) խմորման միջոցով՝ օգտագործելով կեֆիրային սնկերի հիմքով պատրաստված, առանց կաթնաթթվային միկրոօրգանիզմների եւ խմորասնկերի մաքուր կուլտուրաների ավելացման մերաններ,

«թթվակաթնային պաղպաղակ»՝ պաղպաղակ (կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք), որում կաթնային ճարպի զանգվածային բաժինը կազմում է 7,5 տոկոսից ոչ ավելի, արտադրվել է մերանային միկրոօրգանիզմների կամ թթվակաթնային մթերքների օգտագործմամբ,



«թթվակաթնային մթերք»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք, որն արտադրվել է ակտիվ թթվայնության (pH) ցուցանիշի նվազեցմանը, կաթնային սպիտակուցի թթվայնության եւ կոագուլյացիայի ցուցանիշի բարձրացմանը հանգեցնող, կաթի եւ (կամ) կաթնային մթերքների եւ (կամ) դրանց՝ այն ոչ կաթնային բաղադրիչներով խառնուրդների թթվեցման եղանակով, որոնց ներմուծման նպատակը կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելը չէ (թթվեցումից առաջ եւ հետո), կամ առանց նշված բաղադրիչների ավելացման՝ օգտագործելով մերանային միկրոօրգանիզմներ, եւ պարունակում է սոյն Տեխնիկական կանոնակարգի թիվ 1 հավելվածով սահմանված քանակությամբ կենդանի մերանային միկրոօրգանիզմներ,

«թթվասերուցքային յուղային մածուկ»՝ յուղային մածուկ, որն արտադրվել է պաստերիզացված սերուցքից՝ օգտագործելով կաթնաթթվային միկրոօրգանիզմներ,

«թթվասերուցքային կարագ»՝ սերուցքային կարագ, որն արտադրվել է պաստերիզացված սերուցքից՝ օգտագործելով կաթնաթթվային միկրոօրգանիզմներ,

«շիճուկային սպիտակուցների խտանյութ (կոնցենտրատ)»՝ շիճուկային սպիտակուցներ, որոնք ստացվել են կաթնային շիճուկից՝ կոնցենտրացման եւ ուլտրաֆիլտրման միջոցով,

«կոնցենտրացված կամ խտացրած յուղազերծված կաթ»՝ կոնցենտրացված կամ խտացրած կաթնային մթերք, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 20 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 1,5 տոկոսից ոչ ավելի,

«կոնցենտրացված կամ խտացրած անքաշ կաթ»՝ կոնցենտրացված կամ խտացրած կաթնային մթերք, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 25 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում

կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 7,5 տոկոսից ոչ պակաս,

«կոնցենտրացված կամ խտացրած, մասամբ յուղազերծված կաթ»՝ կոնցենտրացված կամ խտացրած կաթնային մթերք, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 20 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 1,5 տոկոսից ավելի, սակայն 7,5 տոկոսից պակաս,

«կումիս»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է զամբիկի կաթի խառը (կաթնաթթվային եւ սպիրտային) խմորման միջոցով՝ օգտագործելով մերանային միկրոօրգանիզմներ (բուլղարական եւ ացիդոֆիլային կաթնաթթվային ցուպիկներ) ու խմորասնկեր,

«կումիսային մթերք»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է կովի կաթից՝ կումիսի արտադրության տեխնոլոգիային համապատասխան,

«լակտոլոզա»՝ լակտոզայի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է լակտոզա պարունակող կաթնային հումքից՝ լակտոզայի իզոմերացման միջոցով,

«կովի կաթից կարագ»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք՝ էմուլսիոն կաթնային հիմքով, որում գերակշռող բաղկացուցիչ մասը կաթնային ճարպն է, որն արտադրվել է կովի կաթից, կաթնային մթերքներից եւ (կամ) կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքներից՝ դրանցից ճարպային ֆազի անջատման ու դրանում կաթնային պլազմայի հավասարաչափ բաշխման միջոցով,

«յուղային մածուկ»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք՝ էմուլսիոն ճարպային հիմքով, որում ճարպի զանգվածային բաժինը կազմում է 39-ից մինչեւ 49 տոկոսը ներառյալ, եւ որն արտադրվել է կովի կաթից, կաթնային մթերքներից եւ (կամ) կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքներից՝

կայունարարների օգտագործմամբ, ավելացնելով կամ չավելացնելով ոչ կաթնային բաղադրիչներ՝ չունենալով կաթնային բաղադրիչները փոխարինելու նպատակ,

«մեշնիկովյան թթվեցրած կաթ (պրոստոկվաշա)»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է մերանային միկրոօրգանիզմների (ջերմասեր կաթնաթթվային ստրոպտոկոկների եւ բուլղարական կաթնաթթվային ցուպիկների) օգտագործմամբ,

«կաթ»՝ գյուղատնտեսական կենդանիների կաթնագեղձերի բնականոն ֆիզիոլոգիական սեկրեցիայի մթերք, որն ստացվել է մեկ կամ մի քանի կենդանիներից՝ կաթնարտադրության շրջանում մեկ կամ մի քանի անգամ կթելու արդյունքում այդ մթերքում որեւէ բան չավելացնելով կամ որեւէ նյութ չհեռացնելով դրանից,

«կաթ պարունակող մթերք»՝ սննդամթերք, որն արտադրվել է կաթից եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերից եւ (կամ) կաթնային մթերքներից եւ (կամ) կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքներից ու ոչ կաթնային բաղադրիչներից՝ այն տեխնոլոգիայով, որով նախատեսվում է կաթնային ճարպը բացառապես կաթնային ճարպի փոխարինիչով փոխարինելու հնարավորություն՝ կաթնային ճարպի 50 տոկոսից ոչ ավելի քանակությամբ, եւ թույլատրվում է ոչ կաթնային ծագման սպիտակուցների օգտագործում՝ չունենալով կաթնային սպիտակուցները փոխարինելու նպատակ, պատրաստի մթերքի չոր նյութերում կաթի չոր նյութերի՝ 20 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժնով,

«կաթնային պլազմա»՝ կաթի սպիտակուցների, կաթնաշաքարի (լակտոզայի), ջրային ֆազում հանքային նյութերի, ֆերմենտների եւ վիտամինների կոլլոիդային համակարգ,

«կաթնամթերք»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որը ներառում է կաթնային մթերքը, կաթնային բաղադրյալ մթերքը, կաթ պարունակող մթերքը, կաթի վերամշակումից ստացվող կողմնակի մթերքը, մանկական սննդի համար

նախատեսված արտադրանքը՝ կաթնային հիմքով, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդները (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդները, կաթնային ըմպելիքները (այդ թվում՝ չոր)՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված, կաթնային շիլաները՝ օգտագործման համար պատրաստի եւ չոր կաթնային շիլաները (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի)՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված,

«կաթնային շիճուկ՝ ենթապանրային, կաթնաշոռային կամ կազեինային»՝ կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերք, որն ստացվել է պանիր (ենթապանրային շիճուկ), կաթնաշոռ (կաթնաշոռային շիճուկ) կամ կազեին (կազեինային շիճուկ) արտադրելիս,

«կաթնային պաղպաղակ»՝ պաղպաղակ (կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք), որում կաթնային ճարպի զանգվածային բաժինը կազմում է 7,5 տոկոսից ոչ ավելի,

«կաթնային շիլաներ՝ օգտագործման համար պատրաստի, եւ չոր կաթնային շիլաներ (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի)՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված»՝ մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք, որն արտադրվել է տարբեր տեսակի ձավարեղենից եւ (կամ) այլուրից, կաթից եւ (կամ) կաթնային մթերքներից եւ (կամ) կաթ պարունակող մթերքներից՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթնային բաղադրիչներ, օգտագործման համար պատրաստի արտադրանքի չոր նյութերում կաթի չոր նյութերի՝ 15 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժնով,

«կաթնային ըմպելիքներ՝ վաղ տարիքի երեխաների համար նախատեսված»՝ վաղ տարիքի երեխաների համար նախատեսված, օգտագործման համար պատրաստի կաթնամթերք, որն արտադրվել է հում կաթից եւ (կամ) կաթնային

մթերքներից՝ ավելացնելով կամ չավելացնելով ոչ կաթնային բաղադրիչներ, հետագա ջերմամշակմամբ, առնվազն պաստերիզացմամբ, եւ համապատասխանում է վաղ տարիքի երեխաների ֆիզիոլոգիական պահանջներին,

«կաթնային պահածոներ», «կաթնային բաղադրյալ պահածոներ», «կաթ պարունակող պահածոներ»՝ չոր կամ կոնցենտրացված (խտացրած), տարայում փաթեթավորված կաթնային, կաթնային բաղադրյալ, կաթ պարունակող մթերքներ,

«կաթնային ճարպ»՝ կաթնային մթերք, որում կաթնային ճարպի զանգվածային բաժինը կազմում է 99,8 տոկոսից ոչ պակաս, ունի չեզոք համ եւ հոտ ու արտադրվում է կաթից եւ (կամ) կաթնային մթերքներից՝ կաթնային պլազմայի հեռացման միջոցով,

«կաթնային ըմպելիք»՝ կաթնային կամ կաթնային բաղադրյալ մթերք, որն արտադրվել է կաթից եւ (կամ) կաթի բաղկացուցիչ մասերից եւ (կամ) կաթնային մթերքներից, այդ թվում՝ կոնցենտրացված եւ (կամ) խտացրած եւ (կամ) չոր կաթնային մթերքներից ու ջրից՝ ավելացնելով կամ չավելացնելով այլ կաթնային մթերքներ կամ ոչ կաթնային բաղադրիչներ՝ չունենալով կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելու նպատակ, կաթնային սպիտակուցի՝ 2,6 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժնով ու կաթի չոր յուղազերծված նյութերի՝ 7,4 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժնով (կաթնային մթերքի համար),

«կաթնային մթերք»՝ սննդամթերք, որն արտադրվել է կաթից եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերից եւ (կամ) կաթնային մթերքներից՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթի վերամշակումից ստացված մթերքներ (բացառությամբ կաթ պարունակող մթերքի արտադրության ընթացքում կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքների), չօգտագործելով ոչ կաթնային ճարպեր ու ոչ կաթնային սպիտակուցներ, եւ որի բաղադրության մեջ կարող են առկա լինել կաթի վերամշակման համար ֆունկցիոնալ առումով անհրաժեշտ բաղադրիչներ,

«կաթնաշաքար»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է կաթնային շիճուկից կամ կաթնային շիճուկի ուլտրաֆիլտրատից՝ լակտոզայի կոնցենտրացման, բյուրեղացման եւ չորացման միջոցով,

«կաթնային բաղադրյալ մթերք»՝ սննդամթերք, որն արտադրվել է կաթից եւ (կամ) դրա բաղկացուցիչ մասերից եւ (կամ) կաթնային մթերքներից՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերք (բացառությամբ կաթ պարունակող մթերքների արտադրության ընթացքում կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքների) եւ ոչ կաթնային բաղադրիչներ (բացառությամբ ոչ կաթնային ծագման ճարպերի, որոնք ներմուծվում են բաղադրության մեջ որպես ինքնուրույն բաղադրամասեր (չի տարածվում վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնամթերքի վրա, որն արտադրելիս օգտագործվում են ոչ կաթնային ծագման ճարպեր)), որոնք ավելացվում են՝ չունենալով կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելու նպատակը: Ընդ որում, պատրաստի մթերքում կաթի բաղկացուցիչ մասերը պետք է լինեն 50 տոկոսից ավելի, պաղպաղակում եւ կաթի վերամշակումից ստացվող քաղցր մթերքներում՝ 40 տոկոսից ավելի,

«պաղպաղակ պինդ»՝ պաղպաղակ, որը սառցարանում մշակվելուց հետո ենթարկվում է սառեցման  $-18^{\circ}\text{C}$ -ից ոչ բարձր ջերմաստիճանում եւ պահպանում է նշված ջերմաստիճանը այն պահելիս, փոխադրելիս եւ իրացնելիս,

«պաղպաղակ փափուկ»՝ պաղպաղակ, որի ջերմաստիճանը  $-5^{\circ}\text{C}$ -ից  $-7^{\circ}\text{C}$  է եւ սպառողներին է իրացվում սառցարանում մշակման ենթարկվելուց անմիջապես հետո,

«պաղպաղակ՝ կաթնային ճարպի փոխարինիչով»՝ պաղպաղակ (կաթ պարունակող մթերք)՝ ճարպի՝ 12 տոկոսից ոչ ավելի զանգվածային բաժնով,

«պաղպաղակ»՝ հարած, սառեցված եւ սառեցված վիճակում սպառվող քաղցր կաթնային մթերք, կաթնային բաղադրյալ մթերք, կաթ պարունակող մթերք,

«ազգային կաթնային մթերք»՝ կաթնային մթերք, որն ունի Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետության տարածքում պատմականորեն ձեւավորված անվանում, ինչը որոշվում է դրա արտադրության տեխնոլոգիայի առանձնահատկություններով, հումքով, մերան արտադրելիս օգտագործվող բաղադրությամբ եւ (կամ) աշխարհագրական օբյեկտի (համապատասխան կաթնային մթերքի տարածման վայրի) անվանմամբ,

«ոչ կաթնային բաղադրիչներ»՝ սննդամթերք, որն ավելացվում է կաթի վերամշակումից ստացվող մթերքներին, կամ սննդային հավելումներ կամ վիտամիններ կամ միկրո- եւ մակրոտարրեր կամ սպիտակուցներ կամ ճարպեր կամ ոչ կաթնային ծագման ածխաջրեր,

«նորմալացված կաթ»՝ կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված հումք, որում կաթնային ճարպի ու կաթնային սպիտակուցի եւ (կամ) կաթի չոր յուղազերծված նյութերի զանգվածային բաժինը կամ դրանց հարաբերակցությունը համապատասխանեցվում է ստանդարտի ցուցանիշներին կամ պատրաստողի այն տեխնիկական փաստաթղթին, որին համապատասխան արտադրվում է կաթի վերամշակումից ստացվող մթերքը,

«յուղազերծված կաթ»՝ կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված հումք՝ կաթնային ճարպի՝ 0,5 տոկոսից պակաս զանգվածային բաժնով, որն ստացվում է կաթից կաթնային ճարպի անջատման արդյունքում,

«հարստացված կաթ»՝ հումք կամ խմելու կաթ, որում բնական (սկզբնական) պարունակության համեմատությամբ մթերքի սննդային արժեքը բարձրացնելու նպատակով հավելյալ, առանձին կամ համալիր ներմուծվում են կաթնային սպիտակուց, վիտամիններ, միկրո- եւ մակրոտարրեր, սննդային մանրաթելեր, կիսաչհագեցած ճարպաթթուներ, ֆոսֆոլիպիդներ, պրեբիոտիկներ,

«պաստերիզացված, մանրէազերծված, ուլտրապաստերիզացված, գերբարձր ջերմաստիճանում մշակված կաթ»՝ կաթ, որը ենթարկվել է ջերմամշակման՝ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ անվտանգության միկրոկենսաբանական ցուցանիշներին ներկայացվող պահանջները պահպանելու նպատակով,

«թան»՝ կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերք, որն ստացվել է կովի կաթից կարագ արտադրելիս,

«խմելու կաթ»՝ կաթ՝ անքաշ, յուղազերծված, նորմալացված, հարստացված, կաթնային մթերք՝ կաթնային ճարպի՝ 10 տոկոսից պակաս զանգվածային բաժնով, ջերմամշակման, առնվազն պաստերիզացման ենթարկված, առանց չոր կաթնային մթերքների եւ ջրի ավելացման, սպառողական տարայում բաժնեծրարված,

«խմելու սերուցք»՝ սերուցք, որը ենթարկվել է ջերմամշակման, առնվազն պաստերիզացման եւ բաժնեծրարվել է սպառողական տարայում,

«հալած պանիր»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք, որն արտադրվել է պանրից եւ (կամ) կաթնաշոռից՝ օգտագործելով կաթնային մթերքներ եւ (կամ) կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքներ, էնուլզացնող աղեր կամ կառուցվածք հաղորդող միջոցներ՝ հալեցման նպատակով խառնուրդները մանրացնելու, խառնելու, հալեցնելու եւ էնուլզացնելու միջոցով, ավելացնելով կամ չավելացնելով ոչ կաթնային բաղադրիչներ, որոնց ներմուծման նպատակը կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելը չէ,

«հալած պանրամթերք»՝ կաթ պարունակող մթերք, որն արտադրվել է հալած պանրի արտադրության տեխնոլոգիային համապատասխան,

«պլոմբիր»՝ պաղպաղակ (կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք), որում կաթնային ճարպի զանգվածային բաժինը կազմում է 12 տոկոսից ոչ պակաս,



«կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերք»՝ զուգակցված մթերք, որն ստացվել է կաթի վերամշակման մթերքի արտադրության գործընթացում,

«ենթապանրային յուղային մածուկ»՝ յուղային մածուկ, որն արտադրվել է ենթապանրային շիճուկի առանձնացման միջոցով ստացված սերուցքից,

«կաթի վերամշակումից ստացված մթերք՝ առանց լակտոզայի»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որում լակտոզայի պարունակությունը ջրատարրալուծված (հիդրոլիզացված) կամ հեռացված լակտոզայով օգտագործման համար պատրաստի 1 Լ մթերքում կազմում է 0,1 գ-ից ոչ ավելի:

«կաթի վերամշակումից ստացված մթերք հարած»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է հարելու միջոցով,

«կաթի վերամշակումից ստացված մթերք վերականգնված»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք (բացի խմելու ջրից), որն արտադրվել է կոնցենտրացված (խտացրած) կամ կաթի վերամշակումից ստացված չոր մթերքից եւ ջրից՝ ավելացնելով կամ չավելացնելով այլ կաթնային մթերքներ,

«կաթի վերամշակումից ստացված մթերք՝ շաքարով կոնցենտրացված»՝ կաթի վերամշակումից ստացված կոնցենտրացված մթերք, որն արտադրվել է սախարոզայի եւ (կամ) շաքարի այլ տեսակների ավելացմամբ,

«կաթի վերամշակումից ստացված մթերք՝ կոնցենտրացված, խտացրած, շոգեհարված կամ սառեցված»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է դրանից ջրի մասամբ հեռացման միջոցով մինչեւ չոր նյութերի 20 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժնին հասնելը,

«կաթի վերամշակումից ստացված մթերք՝ ցածր լակտոզային»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որում լակտոզան մասամբ ջրատարրալուծված է կամ հեռացված,

«կաթի վերամշակումից ստացված մթերք նորմալացված»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որում կաթնային ճարպի ու կաթնային

սպիտակուցի եւ (կամ) կաթի չոր յուղազերծված նյութերի զանգվածային բաժինների կամ դրանց հարաբերակցության ցուցանիշները համապատասխանեցվել են համապատասխան մթերքի վերաբերյալ փաստաթղթերով սահմանված ցուցանիշներին.

«կաթի վերամշակումից ստացված մթերք յուղազերծված»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է յուղազերծված կաթից եւ (կամ) թանից եւ (կամ) շիճուկից եւ (կամ) արտադրվել է դրանց հիմքով մթերքներից,

«կաթի վերամշակումից ստացված մթերք հարստացված»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք՝ այնպիսի նյութերի ավելացմամբ, ինչպիսիք են կաթնային սպիտակուցները, վիտամինները, միկրո- եւ մակրոտարրերը, սննդային մանրաթելերը, կիսաչհագեցած ճարպաթթուները, ֆոսֆոլիպիդները, պրոբիոտիկ միկրոօրգանիզմները, պրեբիոտիկները՝ առանձին կամ համալիր,

«կաթի վերամշակումից ստացված մթերք վերակոմբինացված»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է կաթի վերամշակումից ստացված մթերքներից եւ (կամ) դրանց առանձին բաղկացուցիչ մասերից ու ջրից,

«կաթի վերամշակումից ստացված մթերք սուբլիմացված»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է կաթի վերամշակումից ստացված սառեցված մթերքից՝ ջրի հեռացման միջոցով, մինչեւ չոր նյութերի՝ 95 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժինն հասնելը,

«կաթի վերամշակումից ստացված մթերք չոր»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որն արտադրվել է դրանից ջրի մասամբ հեռացման միջոցով, մինչեւ չոր նյութերի՝ 90 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժինն հասնելը,

«կաթի վերամշակումից ստացված մթերք՝ ջերմամշակված, պաստերիզացված, մանրէազերծված, ուլտրապաստերիզացված կամ գերբարձր ջերմաստիճանում մշակված»՝ կաթի վերամշակումից ստացված մթերք, որը

ենթարկվել է ջերմամշակման եւ համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված՝ այդ մթերքում միկրոօրգանիզմների պարունակության թույլատրելի մակարդակին ներկայացվող պահանջներին,

«մթերք՝ սպիտակուցի մասնակի հիդրոլիզատների հիմքով»՝ մանկական սննդի համար նախատեսված կաթնամթերք, որն արտադրվել է գյուղատնտեսական կենդանիների կաթի՝ մասնակի ջրատարալուծման ենթարկված սպիտակուցներից,

«կաթի վերամշակումից ստացված մթերք՝ սպիտակուցի լրիվ կամ մասնակի հիդրոլիզատների հիմքով»՝ կաթնամթերք, որն արտադրվել է կովի կաթի՝ ամբողջական կամ մասնակի ջրատարալուծման ենթարկված սպիտակուցներից,

«մանկական սննդի համար նախատեսված արտադրանք՝ կաթնային հիմքով»՝ մանկական սննդի համար նախատեսված սննդամթերք (բացառությամբ չոր եւ հեղուկ կաթնային խառնուրդների, կաթնային ըմպելիքների ու կաթնային շիլաների), որն արտադրվել է գյուղատնտեսական կենդանիների կաթից՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթի վերամշակումից ստացված մթերքներ եւ (կամ) կաթի բաղկացուցիչ մասեր, ինչպես նաեւ ավելացնելով կամ չավելացնելով պատրաստի մթերքի ընդհանուր զանգվածի 50 տոկոսից ոչ ավելի քանակությամբ ոչ կաթնային բաղադրիչներ,

«թթվեցրած կաթ»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է մերանային միկրոօրգանիզմների (լակտոկոկների եւ (կամ) ջերմասեր կաթնաթթվային ստրեպտոկոկների) օգտագործմամբ,

«ոյաժենկա»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է եռացրած կաթը թթվեցնելու միջոցով՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթնային մթերքներ, օգտագործելով մերանային միկրոօրգանիզմներ (ջերմասեր կաթնաթթվային ստրեպտոկոկներ), ավելացնելով կամ չավելացնելով բուլղարական կաթնաթթվային ցուպիկներ,

«շաքարով խտացրած յուղազերծված կաթ»՝ կոնցենտրացված կամ խտացրած կաթնային մթերք շաքարով, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 26 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 1 տոկոսից ոչ ավելի,

«շաքարով խտացրած անքաշ կաթ»՝ կոնցենտրացված կամ խտացրած կաթնային մթերք շաքարով, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 28,5 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 8,5 տոկոսից ոչ պակաս,

«շաքարով խտացրած մասամբ յուղազերծված կաթ»՝ կոնցենտրացված կամ խտացրած կաթնային մթերք շաքարով, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 26 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 1 տոկոսից ավելի, սակայն 8,5 տոկոսից պակաս,

«շաքարով խտացրած սերուցք»՝ կոնցենտրացված կամ խտացրած կաթնային մթերք շաքարով, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 37 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 19 տոկոսից ոչ պակաս,

«թթվեցրած մթերք»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք, որը թթվեցվելուց հետո ենթարկվել է ջերմամշակման, կամ կաթ պարունակող մթերք, որն արտադրվել է թթվակաթնային մթերքի արտադրության տեխնոլոգիային համապատասխան՝ պահպանելով մերանի միկրոֆլորայի տեսքը եւ բաղադրությունը, որով որոշվում է համապատասխան թթվակաթնային մթերքի տեսակը, եւ ունի դրան նման զգայորոշման եւ ֆիզիկաքիմիական հատկություններ,

«քաղցրասերուցքային յուղային մածուկ»՝ յուղային մածուկ, որն արտադրվել է պաստերիզացված սերուցքից,

«քաղցրասերուցքային կարագ»՝ սերուցքային կարագ, որն արտադրվել է պաստերիզացված սերուցքից,

«սերուցք չոր»՝ չոր կաթնային մթերք, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 95 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 42 տոկոսից ոչ պակաս,

«սերուցք»՝ կաթնային մթերք (հումք), որն արտադրվել է կաթից եւ (կամ) կաթնային մթերքներից, հանդես է գալիս որպես կաթնային ճարպի ու կաթնային պլազմայի էմուլսիա, եւ որում կաթնային ճարպի զանգվածային բաժինը կազմում է 10 տոկոսից ոչ պակաս,

«սերուցքային կարագ»՝ կովի կաթից կարագ, որում ճարպի զանգվածային բաժինը կազմում է 50 տոկոսից ոչ պակաս,

«սերուցքային պաղպաղակ»՝ պաղպաղակ (կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք), որում կաթնային ճարպի զանգվածային բաժինը կազմում է 8 տոկոսից մինչեւ 11,5 տոկոս,

«սերուցքային ենթապանրային կարագ»՝ սերուցքային կարագ, որն արտադրվել է ենթապանրային շիճուկի առանձնացման արդյունքում ստացված սերուցքից,

«սերուցքաբուսական հալած խառնուրդ»՝ կաթ պարունակող մթերք, որում ընդհանուր ճարպի զանգվածային բաժինը կազմում է 99 տոկոսից ոչ պակաս, եւ որն արտադրվել է սերուցքաբուսական սփրեդից՝ ճարպային ֆազի հալեցման միջոցով կամ այլ տեխնոլոգիական եղանակների օգտագործմամբ,

«սերուցքաբուսական սփրեդ»՝ կաթ պարունակող մթերք՝ էմուլսիոն ճարպային հիմքով, որում ընդհանուր ճարպի զանգվածային բաժինը կազմում է 39-ից մինչեւ 95 տոկոս, եւ ճարպային ֆազում կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 50-ից մինչեւ 95 տոկոս,

«սերուցքային մթերք»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք՝ ճարպի՝ 10 տոկոսից ավելի զանգվածային բաժնով, որը հիմնականում պատրաստվել է սերուցքից,

«պաղպաղակի համար խառնուրդ հեղուկ»՝ կաթնային հեղուկ մթերք, կաթնային բաղադրյալ հեղուկ մթերք կամ կաթ պարունակող հեղուկ մթերք, որը պարունակում է պաղպաղակի արտադրության համար անհրաժեշտ բոլոր բաղադրիչները,

«պաղպաղակի համար խառնուրդ չոր»՝ չոր կաթնային մթերք, չոր կաթնային բաղադրյալ մթերք կամ կաթ պարունակող չոր մթերք, որն արտադրվել է պաղպաղակի համար նախատեսված հեղուկ խառնուրդը չորացնելու կամ անհրաժեշտ չոր բաղադրիչները խառնելու միջոցով եւ նախատեսված է պաղպաղակի արտադրության համար՝ ջրով, կաթով, սերուցքով եւ (կամ) հյութով վերականգնվելուց հետո,

«թթվասեր»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է սերուցքը թթվեցնելու միջոցով՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթնային արտադրանք, օգտագործելով մերանային միկրոօրգանիզմներ (լակտոկոկներ կամ լակտոկոկների եւ ջերմասեր կաթնաթթվային ստրեպտոկոկների խառնուրդներ), որում կաթնային ճարպի զանգվածային բաժինը կազմում է 10 տոկոսից ոչ պակաս,

«կաթի բաղկացուցիչ մասեր»՝ չոր նյութեր (կաթնային ճարպ, կաթնային սպիտակուց, կաթնաշաքար (լակոզ), ֆերմենտներ, վիտամիններ, հանքային նյութեր), ջուր,

«չոր թթվակաթնային խառնուրդներ՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված»՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնամթերք, որն արտադրվել է թթվակաթնային մթերքի արտադրության մերանային միկրոօրգանիզմների օգտագործմամբ (առանց օրգանական թթուների օգտագործման) կաթի սպիտակուցների ակտիվ թթվայնության (pH) եւ

կոագույլացիայի ցուցանիշների նվազեցմանը հանգեցնող տեխնոլոգիային համապատասխան, չոր խառնուրդներում հետագայում ավելացնելով կամ չավելացնելով սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 2 հավելվածով սահմանված քանակությամբ կենդանի մերանային միկրոօրգանիզմներ,

«չոր կաթնային ըմպելիքներ՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված»՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնամթերք, որն արտադրվել է կովի կաթից եւ (կամ) կաթնային մթերքներից՝ ավելացնելով կամ չավելացնելով ոչ կաթնային բաղադրիչներ, պատրաստի մթերքի չոր նյութերում կաթի չոր նյութերի՝ 15 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժնով, եւ համապատասխանում է վաղ տարիքի երեխաների ֆիզիոլոգիական պահանջներին,

«չոր յուղազերծված կաթ»՝ չոր կաթնային մթերք, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 95 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 1,5 տոկոսից ոչ պակաս,

«չոր անքաշ կաթ»՝ չոր կաթնային մթերք, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 95 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, ու կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 26 տոկոսից ոչ պակաս եւ 42 տոկոսից ոչ ավելի,

«չոր կաթնային մնացորդ»՝ կաթի բաղկացուցիչ մասեր՝ բացառությամբ ջրի,

«չոր յուղազերծված կաթնային մնացորդ»՝ կաթի բաղկացուցիչ մասեր՝ բացառությամբ կաթնային ճարպի եւ ջրի,

«շիճուկ՝ կաթնային, չոր»՝ չոր կաթնային մթերք, որն արտադրվել է կաթը մակարդող ֆերմենտային պատրաստուկների ազդեցությամբ սպիտակուցների կոագուլյացիայի եղանակով պանրի պատրաստման ընթացքում, ինչպես նաեւ

կաթնաթթվի առաջացման արդյունքում սպիտակուցների կոագուլյացիայի կամ ջերմաթթվային եղանակով պանրի, կազեինի եւ կաթնաշոռի պատրաստման ընթացքում ստացված կաթնային շիճուկից ջրի մասամբ հեռացման միջոցով՝ մինչեւ չոր նյութերի 95 տոկոսից ոչ պակաս զանգվածային բաժնին հասնելը,

«շիճուկային սպիտակուց»՝ կաթի սպիտակուց, որը մնում է կաթնային շիճուկում կազեինը նստեցնելուց հետո,

«պանիր, հալած պանիր, պանրամթերք, հալած պանրամթերք ապխտած»՝ պանիր, հալած պանիր, պանրամթերք, հալած պանրամթերք, որոնք ենթարկվել են ապխտման եւ ունեն ապխտած սննդամթերքին բնորոշ յուրահատուկ զգայորոշման հատկություններ: Չի թույլատրվում օգտագործել ապխտման բուրավետիչներ,

«պանիր, պանրամթերք՝ փափուկ, կիսապինդ, պինդ, գերպինդ»՝ պանիր, պանրամթերք, որոնք ունեն սույն Տեխնիկական կանոնակարգի հավելվածներով կանոնակարգված համապատասխան յուրահատուկ զգայորոշման եւ ֆիզիկաքիմիական հատկություններ,

«պանիր, պանրամթերք՝ աղաջուր դրած»՝ պանիր, պանրամթերք, որոնք հասունանում եւ (կամ) պահվում են աղի լուծույթում,

«պանիր, պանրամթերք բորբոսով»՝ պանիր, պանրամթերք, որոնք արտադրվել են պատրաստի պանրի, պանրամթերքի ներսում եւ (կամ) դրանց մակերեւոյթին գտնվող բորբոսասնկերի օգտագործմամբ,

«պանիր, պանրամթերք լորձային»՝ պանիր, պանրամթերք որոնք արտադրվել են պատրաստի պանրի, պանրամթերքի մակերեւոյթին առաջացող լորձային միկրոօրգանիզմների օգտագործմամբ,

«պանիր»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք, որն արտադրվել է կաթից, կաթնային մթերքներից եւ (կամ) կաթի վերամշակումից ստացված կողմնակի մթերքներից՝ օգտագործելով կամ չօգտագործելով հատուկ մերաններ, այն տեխնոլոգիայով, որն ապահովում է կաթնային սպիտակուցի



կոագուլյացիան կաթ մակարդող ֆերմենտների օգնությամբ, կամ թթվային կամ ջերմաթթվային եղանակով՝ հետագայում շիճուկից պանրային զանգվածի առանձնացմամբ, դրա կաղապարմամբ, մամլմամբ, աղադրմամբ կամ առանց աղադրման, հասունացմամբ կամ առանց հասունացման՝ ավելացնելով կամ չավելացնելով ոչ կաթնային բաղադրիչներ, որոնց ներմուծման նպատակը կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելը չէ.

«պանրամթերք»՝ կաթ պարունակող մթերք, որն արտադրվել է պանրի արտադրության տեխնոլոգիային համապատասխան,

«հում կաթ»՝ կաթ, որը չի ենթարկվում ջերմամշակման 40°C-ից ավելի ջերմաստիճանում կամ մշակման, ինչի արդյունքում փոփոխվում են դրա բաղկացուցիչ մասերը,

«հում յուղազերծված կաթ»՝ յուղազերծված կաթ, որը չի ենթարկվում 45°C-ից ավելի ջերմաստիճանում ջերմամշակման, ստացվում է կաթից կաթնային ճարպի առանձնացման արդյունքում,

«պանրիկ»՝ կաթնաշոռային մթերք, որը կաղապարված է, պատված է սննդային մթերքներից պատրաստված ջնարակով կամ պատված չէ այդ ջնարակով, 150 գ-ից ոչ ավելի զանգվածով,

«հում սերուցք»՝ սերուցք, որը չի ենթարկվում 45°C-ից ավելի ջերմաստիճանում ջերմամշակման,

«կաթնաշոռ»՝ թթվակաթնային մթերք, որն արտադրվել է մերանային միկրոօրգանիզմների (լակտոկոկների կամ լակտոկոկների եւ ջերմասեր կաթնաթթվային ստրեպտոկոկների խառնուրդների) եւ կաթնային սպիտակուցի թթվային կամ թթվաշրդանային կոագուլյացիայի մեթոդների օգտագործմամբ՝ հետագայում հեռացնելով շիճուկը ինքնամամլման եւ (կամ) մամլման եւ (կամ) առանձնացման (ցենտրիֆուգման) եւ (կամ) ուլտրաֆիլտրացման միջոցով, ավելացնելով կամ չավելացնելով կաթի բաղկացուցիչ մասեր (թթվեցնելուց առաջ եւ հետո)՝ կաթնային մթերքի նորմալացման նպատակով,

«կաթնաշոռային զանգված»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք, որն արտադրվել է կաթնաշոռից՝ ավելացնելով կամ չավելացնելով սերուցքային կարագ, սերուցք, շաքարով խտացրած կաթ, շաքար եւ (կամ) աղ, ավելացնելով կամ չավելացնելով ոչ կաթնային բաղադրիչներ, որոնց ներմուծման նպատակը կաթի բաղկացուցիչ մասերը փոխարինելը չէ,

«կաթնաշոռային մթերք»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք կամ կաթ պարունակող մթերք, որն արտադրվել է կաթնաշոռից եւ (կամ) կաթի վերամշակումից ստացված մթերքներից՝ կաթնաշոռի արտադրության տեխնոլոգիային համապատասխան՝ ավելացնելով կամ չավելացնելով կաթնային մթերքներ, ավելացնելով կամ չավելացնելով ոչ կաթնային բաղադրիչներ, այդ թվում՝ ոչ կաթնային ճարպեր եւ (կամ) ոչ կաթնային սպիտակուցներ (կաթ պարունակող մթերքի համար), հետագա ջերմամշակմամբ կամ առանց դրա,

«կաթնաշոռային պանրիկ»՝ կաթնային մթերք կամ կաթնային բաղադրյալ մթերք, որն արտադրվել է կաթնաշոռային զանգվածից, կաղապարված է, պատված է սննդամթերքից պատրաստված ջնարակով կամ պատված չէ այդ ջնարակով, 150 գ-ից ոչ ավելի զանգվածով,

«հալած յուղ»՝ կովի կաթից յուղ, որում ճարպի զանգվածային բաժինը կազմում է 99 տոկոսից ոչ պակաս, արտադրվել է սերուցքային կարագից՝ ճարպային ֆազի հալեցման միջոցով, եւ ունի յուրահատուկ զգայորոշման հատկություններ,

«եռացրած կաթ»՝ հումք կամ խմելու կաթ, որը ենթարկվել է 85°C-ից մինչեւ 99°C ջերմաստիճանում ջերմամշակման՝ պահելով 3 ժամից ոչ պակաս՝ մինչեւ յուրահատուկ զգայորոշման հատկություններ ձեռք բերելը,

«ֆերմենտային պատրաստուկներ»՝ կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար՝ սպիտակուցային նյութեր, որոնք անհրաժեշտ են կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության ընթացքում տեղի ունեցող կենսաքիմիական գործընթացներն իրականացնելու համար,

«կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության ընթացքում ֆունկցիոնալ առումով անհրաժեշտ բաղադրիչներ»՝ կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված մերաններ, կեֆիրային սնկեր, պրոբիոտիկ միկրոօրգանիզմներ (պրոբիոտիկներ), պրեբիոտիկներ, ֆերմենտային պատրաստուկներ, որոնք ներմուծվում են կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության ընթացքում, եւ առանց որոնց անհնար է կաթի վերամշակումից ստացվող համապատասխան մթերքի արտադրությունը,

«անքաշ կաթ»՝ կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար հումք, որում բաղկացուցիչ մասերը դրանց կանոնակարգման միջոցով չեն ենթարկվել ներգործության,

«մասամբ յուղազերծված չոր կաթ»՝ չոր կաթնային մթերք, որում կաթի չոր նյութերի զանգվածային բաժինը կազմում է 95 տոկոսից ոչ պակաս, կաթի չոր յուղազերծված նյութերում կաթնային սպիտակուցի զանգվածային բաժինը՝ 34 տոկոսից ոչ պակաս, եւ կաթնային ճարպի զանգվածային բաժինը՝ 26 տոկոսից ոչ պակաս:

### III. Կաթի եւ կաթնամթերքի նույնականացումը

6. Կաթի եւ կաթնամթերքի նույնականացումն իրականացվում է հետեւյալ կանոնների համաձայն.

ա) կաթը եւ կաթնամթերքը տեխնիկական կանոնակարգման այն օբյեկտների շարքին դասելու նպատակով, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Տեխնիկական կանոնակարգը, կաթի եւ կաթնամթերքի նույնականացումն իրականացվում է հայտատուի, պետական հսկողության (վերահսկողության) մարմինների, մաքսային հսկողություն իրականացնող մարմինների, համապատասխանության գնահատման (հավաստման) մարմինների, ինչպես նաեւ այլ շահագրգիռ անձանց կողմից առանց ըստ անվանման հետազոտություն (փորձարկում) անցկացնելու՝ մականշվածքի կազմում կամ ապրանքաուղեկից

փաստաթղթերում նշված կաթի եւ կաթնամթերքի անվանումներին սույն Տեխնիկական կանոնակարգի II բաժնում, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերով սահմանված կաթի եւ կաթնամթերքի անվանումների համապատասխանությունը հաստատելու միջոցով, որոնց գործողությունը տարածվում է կաթի եւ կաթնամթերքի վրա.

բ) այն դեպքում, երբ կաթը եւ կաթնամթերքը հնարավոր չէ նույնականացնել ըստ անվանման, կաթը եւ կաթնամթերքը նույնականացվում են տեսողական մեթոդով՝ կաթի եւ կաթնամթերքի արտաքին տեսքը սույն Տեխնիկական կանոնակարգում, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերում այդ արտադրանքի սահմանման մեջ շարադրված հատկանիշների հետ համեմատելու միջոցով, որոնց գործողությունը տարածվում է կաթի եւ կաթնամթերքի վրա.

գ) կաթի եւ կաթնամթերքի՝ իրենց անվանման հետ համապատասխանությունը սահմանելու նպատակով կաթի եւ կաթնամթերքի նույնականացումն իրականացվում է սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 3 հավելվածով սահմանված հատկանիշները արտաքին տեսքի կամ զգայորոշման ցուցանիշների հետ համեմատության միջոցով կամ սույն Տեխնիկական կանոնակարգի հետ համապատասխանության գնահատման (հավաստման) նպատակով կիրառվող ստանդարտների ցանկով սահմանված որոշակի ստանդարտներով, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում ապահովվում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարումը, կամ տեխնիկական փաստաթղթերի փաթեթով սահմանված հատկանիշների հետ, որոնց համաձայն պատրաստված են կաթը եւ կաթնամթերքը.

դ) այն դեպքում, երբ կաթը եւ կաթնամթերքը հնարավոր չէ նույնականացնել ըստ անվանման, տեսողական մեթոդով կամ զգայորոշման մեթոդով, նույնականացումն իրականացվում է վերլուծական մեթոդով կաթի եւ կաթնամթերքի ֆիզիկաքիմիական եւ (կամ) միկրոկենսաբանական ցուցանիշների՝ սույն Տեխնիկական կանոնակարգով, որոշակի տեխնիկական

փաստաթղթերով, որոնց համաձայն պատրաստվել են կաթը եւ կաթնամթերք, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերով սահմանված հատկանիշների հետ համապատասխանության ստուգման միջոցով, որոնց գործողությունը տարածվում է կաթի եւ կաթնամթերքի վրա:

IV. Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների շուկայում կաթի եւ կաթնամթերքի շրջանառության կանոնները

7. Կաթը եւ կաթնամթերքը շրջանառության մեջ են դրվում Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) շուկայում սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին դրանց համապատասխանության դեպքում, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

8. Կաթը եւ կաթնամթերքը, որոնք համապատասխանում են սույն Տեխնիկական կանոնակարգի, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա, անցել են համապատասխանության գնահատման (հավաստման) գործընթացը, պետք է ունենան Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մականշվածք:

9. Անդամ պետություններն ապահովում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա, համապատասխանող կաթի եւ կաթնամթերքի շրջանառությունը անդամ պետությունների շուկայում՝ անդամ պետության տարածքում սույն Տեխնիկական կանոնակարգում պարունակվող պահանջներին

չներկայացնելով լրացուցիչ պահանջներ եւ չանցկացնելով համապատասխանության գնահատման (հավաստման) լրացուցիչ ընթացակարգեր:

10. Ֆիզիկական անձանց կողմից ոչ արդյունաբերական պատրաստման կաթը եւ կաթնամթերքը շուկաներում, այդ թվում՝ գյուղատնտեսական շուկաներում իրացնելու դեպքում պարտադիր է ցանկացած հարմար եղանակով սպառողին տեղեկացնել անասնաբուժասանիտարական տեսանկյունից դրանց անվտանգության, անվանման, արտադրման վայրի (հասցեի), արտադրման ամսաթվի մասին:

Գյուղատնտեսական շուկաներում հատուկ տրանսպորտային միջոցների տարաներից կամ սննդամթերքի հետ շփման համար նախատեսված նյութերից պատրաստված այլ տարաներից սպառողի տարա տեղափոխելով հում կաթ իրացնելիս վաճառողները (իրավաբանական անձինք, որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք եւ ֆիզիկական անձինք) պարտավոր են սպառողին ներկայացնել անդամ պետության օրենսդրությանը համապատասխան անասնաբուժասանիտարական փորձաքննության անցկացման մասին համապատասխան փաստաթղթերը, ինչպես նաեւ սպառողին տեղեկացնել հում կաթը պարտադիր եռացնելու անհրաժեշտության մասին:

11. Կաթի ընդունման կետերին կամ կաթի վերամշակման ձեռնարկություններին հում կաթ, հում յուղազերծված կաթ, հում սերուցք մատակարարելիս վաճառողները (իրավաբանական անձինք, որպես անհատ ձեռնարկատերեր գրանցված ֆիզիկական անձինք եւ ֆիզիկական անձինք) պարտավոր են ներկայացնել անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրված ապրանքաուղեկից անասնաբուժական փաստաթղթերը, որոնցով հաստատվում է հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի անվտանգությունը:

12. Հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի՝ Մաքսային

միության մաքսային տարածքով փոխադրումն ուղեկցվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրված ապրանքաուղեկից անասնաբուժական փաստաթղթերով, որոնք պարունակում են դրանց անվտանգությունը հաստատող անասնաբուժասանիտարական փորձաքննության անցկացման մասին տեղեկություններ:

Ապրանքաուղեկից անասնաբուժական փաստաթղթի գործողության ժամկետը սահմանվում է՝ ըստ հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի արտադրության վայրերի գյուղատնտեսական մթերատու կենդանիների նկատմամբ անասնաբուժասանիտարական միջոցառումների իրականացման արդյունքներից ելնելով, սակայն այդ փաստաթուղթը տրամադրելու օրվանից 1 ամսից ոչ ավելի:

13. Անդամ պետությունների միջև տեղափոխվող կաթնամթերքը, որը ենթակա է անասնաբուժական հսկողության (վերահսկողության), ներմուծվել է երրորդ երկրից կամ արտադրվել է Մաքսային միության մաքսային տարածքում, ուղեկցվում է անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատով՝ չիրականացնելով անասնահամաճարակային բարեկեցությունը հաստատող անասնաբուժասանիտարական փորձաքննություն:

Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա կաթի եւ կաթնամթերքի յուրաքանչյուր խմբաքանակ ներմուծվում է Մաքսային միության մաքսային տարածք ուղարկող երկրի իրավասու մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի առկայության դեպքում:

#### V. Հում կաթին, հում յուղազերծված կաթին, հում սերուցքին ներկայացվող անվտանգության պահանջները

14. Կենդանիների ծնից հետո՝ առաջին 7 օրվա ընթացքում, դրանց բացթողումից առաջ (ծնից առաջ)՝ 5 օրվա ընթացքում, հիվանդ եւ կարանտինի մեջ գտնվող կենդանիներից ստացված հում կաթը չի թույլատրվում օգտագործել կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար:

15. Կովի հում կաթում չոր յուղազերծված նյութերի զանգվածային բաժինը պետք է կազմի 8,2 տոկոսից ոչ պակաս:

16. Հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի մեջ պոստենցիալ վտանգավոր նյութերի պարունակության մակարդակները չպետք է գերազանցեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) թիվ 1-4 հավելվածներով եւ սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 4 հավելվածով սահմանված թույլատրելի մակարդակները:

17. Հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի մեջ միկրոօրգանիզմների եւ սոմատիկ բջիջների պարունակության մակարդակները չպետք է գերազանցեն սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 5 հավելվածով սահմանված թույլատրելի մակարդակները:

18. Կովի հում կաթի, գյուղատնտեսական կենդանիների մյուս տեսակների հում կաթի եւ կովի կաթից ստացված հում սերուցքի նույնականացման ցուցանիշները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 6 եւ 7 հավելվածներում:

VI. Հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի արտադրության, պահման, փոխադրման, իրացման եւ օգտահանման ընթացքում անվտանգության պահանջները

19. Հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի արտադրության ընթացքում կիրառվող գործընթացները, այդ թվում՝ գյուղատնտեսական կենդանիներին պահելու, կերակրելու, կթելու պայմանները, հում կաթ, հում յուղազերծված կաթ, հում սերուցք հավաքելու, սառեցնելու եւ պահելու պայմանները պետք է ապահովեն դրանց համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաեւ Մաքսային միության յան մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:



20. Գյուղատնտեսական կենդանիներին կթելուց հետո ստացված հում կաթը պետք է մաքրվի եւ սառեցվի  $4^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝ ոչ ավելի, քան 2 ժամվա ընթացքում:

21. Մինչեւ արդյունաբերական վերամշակում սկսելը հում կաթը, հում յուղազերծված կաթը թույլատրվում է պահել (ներառյալ առանձնացման համար օգտագործվող հում կաթը պահելու ժամկետը)  $4^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում, հում սերուցքը՝  $8^{\circ}\text{C}$ -ը չգերազանցող ջերմաստիճանում՝ 36 ժամից ոչ ավելի (ներառյալ փոխադրման ժամանակը):

Մինչեւ արդյունաբերական վերամշակում սկսելը հում կաթը, հում յուղազերծված կաթը (ներառյալ առանձնացման համար օգտագործվող հում կաթը պահելու ժամկետը), վաղ տարիքի երեխաների համար նախատեսված մանկական սննդի մթերքների պատրաստման համար նախատեսված հում սերուցքը թույլատրվում է պահել  $4^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում՝ 24 ժամից ոչ ավելի (ներառյալ փոխադրման ժամանակը):

22. Թույլատրվում է արտադրողի կողմից հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի նախնական ջերմամշակում, այդ թվում՝ պաստերիզացում՝ հետեւյալ դեպքերում՝

ա) հում կաթի, հում յուղազերծված կաթի՝  $19^{\circ}\text{T}$ -ից մինչեւ  $21^{\circ}\text{T}$  թթվայնություն, հում սերուցքի՝  $17^{\circ}\text{T}$ -ից մինչեւ  $19^{\circ}\text{T}$  թթվայնություն.

բ) հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի՝ 6 ժամից ավելի առանց սառեցման պահում.

գ) հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի փոխադրում, որի տեսողությունը գերազանցում է պահման թույլատրելի ժամկետը, սակայն 25 տոկոսից ոչ ավելի.

դ) անդամ պետության լիազորված մարմնի՝ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ոլորտում համապատասխան

հանձնարարագրի առկայություն:

23. Հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի նախնական ջերմամշակում, այդ թվում՝ պաստերիզացում կիրառելիս ջերմամշակման ռեժիմները (ջերմաստիճանը, անցկացման ժամանակահատվածը) նշվում են հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի վերաբերյալ ապրանքաուղեկից փաստաթղթերում:

24. Հում կաթ, հում յուղազերծված կաթ, հում սերուցք արտադրելիս գյուղատնտեսական ապրանք արտադրողները պետք է օգտագործեն սարքավորումներ եւ նյութեր, որոնք համապատասխանում են սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերի անվտանգությանը ներկայացվող պահանջներին:

25. Հում կաթը, հում յուղազերծված կաթը, հում սերուցքը վերամշակման վայր փոխադրելու ժամանակ, վերամշակում սկսելու պահին դրանց ջերմաստիճանը չպետք է գերազանցի 10°C-ը:

Սույն կետով սահմանված՝ դրանց ջերմաստիճանին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի ընդունումը թույլատրվում է կաթի վերամշակումից ստացվող մթերքներ պատրաստողի կողմից դրանք անմիջապես վերամշակման ենթարկելու պայմանով:

26. Հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի փոխադրումն իրականացվում է ամուր փակվող կափարիչներով կնքված տարաներում, որոնք պատրաստված են սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերի անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխանող նյութերից: Տրանսպորտային միջոցները պետք է ապահովեն սույն Տեխնիկական կանոնակարգի 20-րդ եւ 21-րդ կետերով սահմանված ջերմաստիճանի պահպանումը:

27. Կաթի վերամշակումից ստացվող մթերքներ պատրաստողի կողմից հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի, ինչպես նաեւ նախնական

ջերմամշակման, այդ թվում՝ պաստերիզացման ենթարկվածների պահումը մինչև վերամշակում սկսելն իրականացվում է առանձին մակնշված տարաներում՝  $4^{\circ}\text{C} \pm 2^{\circ}\text{C}$  ջերմաստիճանի պայմաններում:

28. Հում կաթի, հում յուղագերծված կաթի, հում սերուցքի, ինչպես նաև նախնական ջերմամշակման, այդ թվում՝ պաստերիզացման ենթարկվածների իրացման գործընթացները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետով սահմանված պահանջներին եւ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին:

29. Հում կաթի, հում յուղագերծված կաթի, հում սերուցքի, ինչպես նաև նախնական ջերմամշակման, այդ թվում՝ պաստերիզացման ենթարկվածների օգտահանման գործընթացները պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին:

## VII. Կաթնամթերքի անվտանգությանը ներկայացվող պահանջները

30. Սահմանված պիտանիության ժամկետում Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ գտնվող կաթնամթերքն ըստ նշանակության օգտագործվելիս պետք է լինի անվտանգ:

Կաթնամթերքը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի եւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

31. Կաթնամթերքի արտադրությունը պետք է իրականացվի հում կաթից եւ (կամ) հում յուղազրկված կաթից եւ (կամ) հում սերուցքից, որոնք համապատասխանում են սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված անվտանգության պահանջներին եւ ենթարկվել են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող կաթնամթերքի ստացումն

ապահովող ջերմամշակման:

Կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող մյուս պարենային հումքը պետք է համապատասխանի Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրա վրա:

32. Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվելու համար նախատեսված կաթնամթերքում թունավոր տարրերի, պոտենցիալ վտանգավոր նյութերի, միկոտոքսինների, հակամանրէների (անտիբիոտիկներ), թունաքիմիկատների, ռադիոնուկլիդների, միկրոօրգանիզմների պարունակության եւ օքսիդացման փչացման ցուցանիշների արժեքի մակարդակները չպետք է գերազանցեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) թիվ 1-4 հավելվածներով եւ սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 4 հավելվածով սահմանված մակարդակները:

33. Կաթնամթերքում միկրոօրգանիզմների պարունակության մակարդակները չպետք է գերազանցեն սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 8 հավելվածով սահմանված թույլատրելի մակարդակները:

34. Դիետիկ սննդի համար նախատեսված մթերքների եւ թթվակաթնային մթերքների (բացի կաթնային բաղադրյալ մթերքներից) արտադրությունը պետք է իրականացվի՝ չկիրառելով սննդային հավելումներ եւ բուրավետիչներ՝ բացառությամբ ֆունկցիոնալ առումով անհրաժեշտ բաղադրիչների:

Կաթնաշոռային զանգվածի եւ հատիկավոր կաթնաշոռի արտադրությունը պետք է իրականացվի՝ պատրաստի արտադրանքը չենթարկելով ջերմամշակման եւ չավելացնելով կազմության (կոնսիստենցիա) կայունացուցիչներ ու կոնսերվանտներ:

35. Կաթի վերամշակումից ստացվող մթերքների նույնականացման զգայորոշման ցուցանիշները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 3 հավելվածում:

36. Կաթնամթերքի նույնականացման ֆիզիկաքիմիական եւ միկրոկենսաբանական ցուցանիշները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 1 հավելվածում:

VIII. Կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար անհրաժեշտ ֆունկցիոնալ բաղադրիչներին ներկայացվող անվտանգության պահանջները

37. Կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված մոնոկուլտուրաներում կամ մերանների բաղադրության մեջ օգտագործվող միկրոօրգանիզմները, այդ թվում՝ պրոբիոտիկ, պետք է լինեն նույնականացված, ոչ ախտածին, ոչ թունածին ու պետք է ունենան այնպիսի հատկություններ, որոնք անհրաժեշտ են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող նշված արտադրանքի արտադրության համար:

38. Կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված ֆերմենտային պատրաստուկները պետք է ունենան որոշակի տեխնոլոգիական գործընթացի համար անհրաժեշտ ակտիվություն եւ առանձնահատկություն ու համապատասխանեն Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված ֆերմենտային պատրաստուկների վրա:

39. Կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված մերանների, կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված ֆերմենտային պատրաստուկների, մերանային եւ պրոբիոտիկ միկրոօրգանիզմների աճեցման համար նախատեսված սննդային միջավայրերի միկրոկենսաբանական անվտանգության մակարդակները չպետք է գերազանցեն սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 8 հավելվածով սահմանված թույլատրելի մակարդակները:

40. Կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված մերանների, պրոբիոտիկ միկրոօրգանիզմների, պրեբիոտիկների, կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված ֆերմենտային պատրաստուկների, կաթի վերամշակումից

ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված մերանների պատրաստման համար սննդային միջավայրերի անվտանգության մյուս ցուցանիշները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաև «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) թիվ 3 հավելվածով սահմանված պահանջներին:

41. Կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված մերաններ, կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված ֆերմենտային պատրաստուկներ եւ կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության ընթացքում ֆունկցիոնալ առումով անհրաժեշտ այլ բաղադրիչներ պատրաստողն ապահովում է սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրանց համապատասխանությունը :

Կաթնամթերք պատրաստողը պետք է ապահովի արտադրական մերանի եւ դրա արտադրության գործընթացների անվտանգությունը, ինչպես նաև դրա համապատասխանությունը փաստաթղթի (ստանդարտի կամ պատրաստողի այն տեխնիկական փաստաթղթի, որին համապատասխան արտադրվում է կաթի վերամշակումից ստացվող մթերքը) պահանջներին:

Կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված մերանները պետք է օգտագործել չվնասված փաթեթվածքը բացելուց անմիջապես հետո: Չի թույլատրվում կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության համար նախատեսված մերանների բացված փաթեթվածքները պահել եւ օգտագործել վնասվածները:

42. Մանկական սննդի համար նախատեսված՝ կաթնային հիմքով սննդամթերք արտադրելիս չի թույլատրվում օգտագործել կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված՝ կաթ մակարդող ֆերմենտային պատրաստուկներ եւ կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության համար նախատեսված մերաններ, որոնք ստացվել են գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների օգտագործմամբ:

IX. Կաթի եւ կաթնամթերքի՝ դրանց արտադրության, պահման, փոխադրման եւ իրացման գործընթացներում անվտանգության ապահովմանը ներկայացվող պահանջները

43. Կաթի եւ կաթնամթերքի արտադրության ընթացքում կիրառվող տեխնոլոգիական գործընթացներով պետք է ապահովել սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանող արտադրանքի բացթողումը, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

44. Արտադրության գործընթացում կաթի եւ կաթնամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերը պետք է համապատասխանեն սննդամթերքի հետ շփման մեջ գտնվող նյութերի անվտանգությանը ներկայացվող պահանջներին:

Կաթի եւ կաթնամթերքի արտադրության գործընթացի բոլոր փուլերում պետք է ապահովվի դրանց հետազօծելիությունը:

45. Արտադրական օբյեկտները, որտեղ իրականացվում են հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի արտադրության եւ (կամ) կաթնամթերքի արտադրության ընթացքում դրանց վերամշակման (մշակման) գործընթացները, ենթակա են պետական գրանցման «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) դրույթներին համապատասխան:

46. Արտադրական տարածքների կազմակերպումը, որտեղ իրականացվում է կաթի եւ կաթնամթերքի արտադրության գործընթացը, կաթի եւ կաթնամթերքի արտադրության գործընթացում օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումները եւ գույքը, կաթի եւ կաթնամթերքի արտադրության թափոնների պահման եւ հեռացման պայմանները, ինչպես նաեւ կաթի եւ կաթնամթերքի արտադրության գործընթացում օգտագործվող ջուրը պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին:

47. Վաղ տարիքի երեխաների համար նախատեսված մանկական սննդի համար կաթնային հիմքով սննդամթերքի, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդների (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդների, վաղ

տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքների (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաների եւ վաղ տարիքի երեխաների մանկական սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաների (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) արտադրությունն իրականացվում է մասնագիտացված արտադրական օբյեկտներում, մասնագիտացված արտադրամասերում կամ մասնագիտացված տեխնոլոգիական ցանցերում:

Պատրաստողները, վաճառողները եւ այն անձինք, որոնք կատարում են կաթի եւ կաթնամթերքի օտարերկրյա պատրաստողների գործառույթ, պարտավոր են դրանց պահման, փոխադրման եւ իրացման գործընթացներն իրականացնել այնպես, որ կաթը եւ կաթնամթերքը համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

Կաթի եւ կաթնամթերքի պահման, փոխադրման, իրացման եւ օգտահանման գործընթացները պետք է համապատասխանեն «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին:

Մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքին, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներին (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդներին, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքներին (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաներին եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաներին (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) ներկայացվող անվտանգության պահանջները

48. Մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքը, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա



օգտագործման կաթնային խառնուրդները (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդները, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքները (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաները եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաները (որոնք տնային պայմաններում խմելու ջր օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին, ինչպես նաեւ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) 8-րդ հոդվածով սահմանված պահանջներին եւ պետք է լինեն երեխաների առողջության համար անվտանգ:

49. Մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքում, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներում (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդներում, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքներում (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաներում եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաներում (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) օքսիդացման փչացման եւ պոտենցիալ վտանգավոր նյութերի պարունակության թույլատրելի մակարդակները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 9 հավելվածում:

50. Մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքում, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներում (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդներում, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքներում (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաներում եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաներում (որոնք տնային պայմաններում

խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի), այդ թվում՝ կաթնային խոհանոցներում արտադրված մթերքներում միկրոօրգանիզմների պարունակության թույլատրելի մակարդակները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 2 հավելվածում:

Կաթի վերամշակումից ստացվող մթերքի արտադրության ընթացքում ֆունկցիոնալ առումով ոչ անհրաժեշտ բաղադրիչների այն միկրոօրգանիզմների քանակը, որոնք ավելացվում են չոր խառնուրդին վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր թթվակաթնային խառնուրդների արտադրության ընթացքում, սահմանված է սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 2 հավելվածում:

Մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքում, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներում (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդներում, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքներում (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաներում եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաներում (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) միկրոկենսաբանական անվտանգության ցուցանիշները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 2 հավելվածով սահմանված պահանջներին:

51. Նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնամթերքում, կաթնային բաղադրյալ մթերքներում օքսիդացման փչացման եւ պոտենցիալ վտանգավոր նյութերի պարունակության թույլատրելի մակարդակները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 10 հավելվածում:

52. Նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնամթերքում, կաթնային բաղադրյալ մթերքներում միկրոօրգանիզմների պարունակության թույլատրելի մակարդակները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 11 հավելվածում:

53. Մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքի, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդների (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդների, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքների (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաների եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաների (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) նույնականացման ֆիզիկաքիմիական ցուցանիշները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 12 հավելվածում:

54. Նախադպրոցական, դպրոցական տարիքի երեխաների սննդի համար նախատեսված մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքի նույնականացման ֆիզիկաքիմիական ցուցանիշները սահմանված են սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 13 հավելվածում:

55. Մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքի, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդների (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդների, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքների (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաների եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաների (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) սննդային արժեքի ցուցանիշները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 12 եւ 14 հավելվածներով սահմանված թույլատրելի մակարդակներին ու երեխայի օրգանիզմի ֆունկցիոնալ վիճակին՝ հաշվի առնելով նրա տարիքը:

56. Համապատասխան խառնուրդի բաղադրությունը մայրական կաթի բաղադրությանն առավելագույնս մոտեցնելու նպատակով ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային

խառնուրդների (մայրական կաթի փոխարինիչ) ու հետագա օգտագործման կաթնային խառնուրդների արտադրության ընթացքում թույլատրվում է դրանց բաղադրության մեջ ներառել միայն L-ամինաթթուներ, տաուրին, նուկլեոտիդներ, պրոբիոտիկ միկրոօրգանիզմներ եւ պրեբիոտիկներ, ձկան յուղ ու կիսաչհագեցած ճարպաթթուների այլ խտանյութեր:

57. Վաղ տարիքի մանկական սննդի համար նախատեսված՝ մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքի, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդների (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդների, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքների (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաների եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաների (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) արտադրության ընթացքում օգտագործվող վիտամինների եւ հանքային նյութերի ձեւերը սահմանված են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում (ՄՄ ՏԿ 021/2011):

Վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված հեղուկ կաթնային խառնուրդներում, չոր կաթնային խառնուրդներում միկրոնուտրիենտների պարունակության մակարդակը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 14 հավելվածով սահմանված թույլատրելի մակարդակներին:

58. Վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված՝ մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքի, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդների (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդների, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքների (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաների եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված՝ չոր կաթնային շիլաների (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի

վիճակի) արտադրության ընթացքում թույլատրվում է օգտագործել սննդային հավելումներ, որոնց ցանկը սահմանված է սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 15 հավելվածում:

59. Մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքի արտադրության ընթացքում օգտագործվող ոչ կաթնային բաղադրիչները, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդները (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդները, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված կաթնային ըմպելիքները (այդ թվում՝ չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաները եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաները (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) պետք է համապատասխանեն Մաքսային միության այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

#### XI. Կաթնամթերքի փաթեթվածքին ներկայացվող պահանջները

60. Իրացման համար նախատեսված կաթնամթերքը պետք է բաժնեծրարված լինի փաթեթվածքով, որը համապատասխանում է «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 005/2011) պահանջներին եւ կաթի ու կաթնամթերքի պիտանիության ժամկետում ապահովվում է դրանց անվտանգությունը եւ սպառողական հատկությունների պահպանումը՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների համաձայն:

61. Վաղ տարիքի երեխաների համար նախատեսված՝ մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքը, ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդները (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդները, վաղ տարիքի երեխաների համար նախատեսված կաթնային ըմպելիքները (այդ թվում՝

չոր), օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաները եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաները (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) պետք է Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվեն միայն կշռաճրարված եւ հերմետիկ մանրահատ փաթեթվածքով փաթեթավորված, որը չի գերազանցում հետեւյալ ծավալը (կամ զանգվածը)՝

ա) 1 կգ՝ չոր մթերքներ (ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդներ, չոր թթվակաթնային խառնուրդներ, հավելյալ սննդի համար նախատեսված սննդամթերք՝ կաթնային հիմքով, մթերքներ՝ ակնթարթային պատրաստման, կաթնային շիլաներ չոր (որոնք տնային պայմաններում խմելու ջրի օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի)։

բ) 0,2 լ՝ հեղուկ (ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման խառնուրդներ)։

գ) 0,25 լ (կգ)՝ կաթ խմելու, սերուցք խմելու, թթվակաթնային մթերքներ։

դ) 0,1 կգ՝ մանկական սննդի համար նախատեսված մածուկանման մթերքներ՝ կաթնային հիմքով։

62. Նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների սննդի համար նախատեսված՝ մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով արտադրանքը պետք է Մաքսային միության մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվի միայն կշռաճրարված եւ հերմետիկ փաթեթվածքով փաթեթավորված։ Նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված՝ մանկական սննդի համար՝ կաթնային հիմքով հեղուկ արտադրանքը պետք է բաց թողնվի 2 լիտրից ոչ ավելի ծավալ ունեցող փաթեթվածքով, մանկական սննդի մածուկանման մթերքները՝ 0,2 կգ-ից ոչ ավելի ծավալով (սննդում չափաբաժնով անմիջական օգտագործման համար)։

63. Կաթի վերամշակումից ստացվող՝ չկշռաճրարված եւ չփաթեթավորված

արագ փչացող մթերքների իրացման դեպքում չի թույլատրվում օգտագործել սպառողի (գնորդի) փաթեթվածքը՝ բացի սույն Տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետում նշված դեպքերից:

64. Չափաբաժանված (կտրատված) կաթնամթերքը փաթեթավորվում է պատրաստողի կամ վաճառողի կողմից այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են այդ արտադրանքի անվտանգության համապատասխանությունը սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

65. Կաթնամթերքի յուրաքանչյուր փաթեթվածք պետք է ունենա մականշվածք, որը սպառողների համար պարունակում է սույն Տեխնիկական կանոնակարգի XII բաժնին համապատասխան տեղեկատվություն:

XII. Կաթի եւ կաթնամթերքի մականշվածքին ներկայացվող պահանջները

66. Կաթը եւ կաթնամթերքը պետք է ուղեկցվեն սպառողների համար այնպիսի տեղեկատվությամբ, որը համապատասխանում է «Սննդամթերքի մականշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 022/2011) պահանջներին եւ սույն Տեխնիկական կանոնակարգի լրացուցիչ պահանջներին:

67. Կաթի եւ կաթնամթերքի խմբային, բազմաշրջանառու կամ տրանսպորտային փաթեթվածքի յուրաքանչյուր միավորի վրա զետեղվում է մականշվածք, որը սպառողի համար պարունակում է հետեւյալ տեղեկատվությունը՝

ա) ապրանքային նշանը (առեւտրային նշանը) (առկայության դեպքում).

բ) զուտ զանգվածը (բրուտո զանգվածը՝ պատրաստողի հայեցողությամբ).

գ) կաթի եւ կաթնամթերքի խմբաքանակի համարը.

դ) նախագգուշացնող գրառումներ կամ մանիպուլյացիոն նշաններ (օրինակ՝ «հեռու պահել արեւի ճառագայթներից», «ջերմաստիճանի սահմանափակում», «հեռու պահել խոնավությունից», «արագ փչացող բեռ»)՝ զետեղվում են ըստ ընտրության՝ կաթի եւ կաթնամթերքի պահման ու տրանսպորտային փոխադրման ռեժիմներին համապատասխան.

ե) մթերքի բաղադրությունը՝ անմիջապես տրանսպորտային տարայում բաժնեծրարված կաթի եւ կաթնամթերքի համար.

զ) պատրաստողի ստանդարտի կամ տեխնիկական փաստաթղթի նշագրումը, որին համապատասխան արտադրվում է կաթի վերամշակումից ստացվող մթերքը՝ անմիջապես սպառողական տարայում բաժնեծրարված կաթի եւ կաթնամթերքի համար (թույլատրվում է չնշել երրորդ երկրից ներմուծվող կաթի եւ կաթնամթերքի համար):

68. Կաթի եւ կաթնամթերքի խմբային կամ տրանսպորտային փաթեթվածքը թափանցիկ պաշտպանիչ պոլիմերային նյութերով փաթաթելու դեպքում դրանց վրա թույլատրվում է չզետեղել մականշվածք: Տվյալ դեպքում սպառողների համար որպես տեղեկատվություն է հանդես գալիս սպառողական տարայի մականշվածքը:

69. Կաթի եւ կաթնամթերքի անվանումները պետք է համապատասխանեն սույն Տեխնիկական կանոնակարգի II բաժնով սահմանված հասկացություններին: Կաթի եւ կաթնամթերքի անվանումները կարող են լրացվել տեսակակազմի նշաններով կամ պատրաստողի ֆիրմային անվանմամբ: Կաթի եւ կաթի վերամշակումից ստացվող մթերքների անվանումներում սույն Տեխնիկական կանոնակարգի II բաժնով սահմանված հասկացությունների հիման վրա ձեւակերպված բառերի հերթականությունը չի կանոնակարգվում մականշման տեքստում, օրինակ՝ «անքաշ կաթ», «կաթ անքաշ», «կարագ սերուցքային», «սերուցքային կարագ»:

Վերականգնված կաթի անվանումը ձեւակերպելիս անհրաժեշտ է նշել



անմիջապես մթերքի պատրաստման ընթացքում օգտագործվող հիմնական հումքի անվանման մեջ՝ միեւնույն չափի տառատեսակով, օրինակ՝ «վերականգնված կաթ՝ չոր կաթից», «վերականգնված կաթ՝ կոնցենտրացված կաթից», «վերականգնված կաթ՝ չոր եւ խտացրած կաթից»:

Թույլատրվում է սերուցքային կարագի անվանման մեջ չնշել դասակարգման հատկանիշները, որոնցով բնութագրվում են դրա տեխնոլոգիայի առանձնահատկությունները (քաղցրասերուցքային, անալի)՝ այն դեպքում, երբ դրա արտադրության ընթացքում չեն օգտագործվում մերանային միկրոօրգանիզմներ եւ կերակրի աղ:

70. Գյուղատնտեսական կենդանիների տեսակի նշումը (բացառությամբ կովերի, որոնցից կաթ է ստացվել) պետք է առկա լինի փաթեթվածքի պիտակի վրա՝ «կաթ» հասկացությունից առաջ կամ այդ հասկացությունից հետո:

71. Կաթի կամ կաթի վերամշակումից ստացվող մթերքների ջերմամշակման եղանակի հետ կապված հասկացությունները նշվում են փաթեթվածքների պիտակների վրա՝ «կաթ» հասկացությունից կամ կաթի վերամշակումից ստացվող մթերքների անվանումներից հետո, օրինակ՝ «կաթ պաստերիզացված», «սերուցք մանրէազերծված»:

72. Կաթի եւ կաթի վերամշակումից ստացվող մթերքների անվանումներից հետո դրանց ջերմամշակման եղանակը նշելու հետ համատեղ կարող է զետեղվել այդ արտադրանքի հետ կապված այլ հասկացություններ, որոնցով բնութագրվում են արտադրության եղանակը, հումքի բաղադրության առանձնահատկությունները, մերանային միկրոօրգանիզմների օգտագործումը, օրինակ՝ «կաթնաշոռային մթերք՝ ջերմամշակված, բուրավետացված (բույրով)», «ըմպելիք թթվակաթնային», «սերուցք վերահամակցված»: Կաթի եւ կաթի վերամշակումից ստացվող մթերքների անվանման մեջ առկա «նորմալացված» հասկացությունը կարելի է չնշել փաթեթվածքների պիտակների վրա:

73. Կաթնային բաղադրյալ մթերքների անվանումները պետք է բաղկացած լինեն կաթնային մթերքի համար սահմանված հասկացություններից եւ լրացվեն դրանց ավելացված ոչ կաթնային բաղադրիչների առկայության մասին տեղեկատվությամբ, օրինակ՝ «կաթնաշոռ՝ մրգերի փոքր կտորներով», «կեֆիր մրգային», «պանիր՝ հալած, խոզապուխտով»:

74. Պրոբիոտիկ միկրոօրգանիզմներով եւ (կամ) պրեբիոտիկներով հարստացված թթվակաթնային մթերքների անվանումները ձեւակերպելիս կաթի վերամշակումից ստացվող մթերքի անվանման հետ թույլատրվում է օգտագործել «բիո» նախածանցը, օրինակ՝ «բիոկեֆիր», «բիոռյաժենկա»:

75. Կաթնային մթերքների, կաթնային բաղադրյալ մթերքների, կաթ պարունակող մթերքների անվանման մեջ առկա «մթերք» հասկացությունը կարող է փոխարինվել կամ լրացվել մթերքի կազմությունը կամ ձեւը բնութագրող եզրույթով (դոնդոդ, կիսել, կոկտեյլ, կրեմ, մուս, ըմպելիք, մածուկ, ռուլետ, սոուս, սուֆլե, տորթ եւ այլն), օրինակ՝ «կաթնահյութային կոկտեյլ», «թթվասերային սոուս», «կաթնային կիսել», «կաթնաշոռային սուֆլե ընկույզով», «պանրային ռուլետ համեմունքներով»:

76. Համապատասխան թթվակաթնային մթերքի արտադրության տեխնոլոգիային համապատասխան արտադրված՝ կաթ պարունակող կամ թթվեցրած մթերքի մականշվածքում չի թույլատրվում օգտագործել թթվակաթնային մթերքների հետ կապված հասկացություններ (այրան, ացիդոֆիլին, մածուն, յոգուրտ, կեֆիր, կումիս, կումիսային մթերք, թթվեցրած կաթ, մեչնիկովյան թթվեցրած կաթ, ոյաժենկա, թթվասեր, կաթնաշոռ): Կաթ պարունակող մթերքի կամ թթվեցրած մթերքի մականշվածքում «կաթ պարունակող» կամ «թթվեցրած» բառերը պետք է փոխարինվեն այդ մթերքների արտադրության տեխնոլոգիան բնութագրող բառերով, օրինակ՝ «կեֆիրային», «կեֆիրային, ջերմամշակված», «յոգուրտային», «յոգուրտային, ջերմամշակված»:

Կեֆիրային սնկերի միկրոօրգանիզմների (միկրոֆլորայի) կազմի մեջ մտնող կաթնաթթվային միկրոօրգանիզմների մաքուր կուլտուրաների եւ մեկ կամ մի

քանի տեսակի խմորասնկերի հիման վրա պատրաստված մերանների օգտագործմամբ կեֆիրի արտադրության տեխնոլոգիայի համաձայն արտադրված թթվակաթնային մթերքի անվանման մեջ օգտագործվում է «կեֆիրային մթերք» հասկացությունը, որը դրոշմվում է միեւնույն չափի տառատեսակով:

77. Պանրի տեսքը եւ տիպը բնութագրող եզրույթը (պինդ, կիսապինդ, փափուկ, թարմ (առանց հասունացման), կտորներով, մածուկանման) կարող է չօգտագործվել պանրի անվանման զուգակցությամբ:

78. Մականշվածքում «հարստացված» հասկացությունն օգտագործվում է համապատասխան մթերքի անվանման զուգակցությամբ եւ ուղեկցվում է այդ մթերքներում ավելացված նյութերի առկայության ու քանակության մասին տեղեկատվությամբ:

79. Այն դեպքում, երբ մթերքները չեն համապատասխանում սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված նոյնականացման ցուցանիշներին, տեսակակազմի նշանների անվանումներում եւ կաթի ու կաթի վերամշակումից ստացվող մթերքների այլ լրացուցիչ անվանումներում չպետք է օգտագործել սույն Տեխնիկական կանոնակարգի II բաժնով սահմանված հասկացությունները:

80. Կաթնամթերքի եւ կաթնային բաղադրյալ մթերքների սպառողական փաթեթվածքի վրա մականշվածք զետեղելիս թույլատրվում է դրանց անվանումը մասնակիորեն դրոշմել այդ փաթեթվածքի՝ ընթերցելու համար հարմար կողմում այն դեպքում, երբ հենց այդ փաթեթվածքի վրա արդեն իսկ դրոշմվել են տվյալ մթերքների լրիվ անվանումները:

Կաթ պարունակող մթերքի սպառողական փաթեթվածքի վրա մականշվածք զետեղելիս չի թույլատրվում կաթ պարունակող մթերքի անվանումը մասամբ դրոշմել այդ փաթեթվածքի՝ ընթերցելու համար հարմար կողմում՝ սպառողին մոլորության մեջ զգելուց խուսափելու համար:

81. Կաթնային ճարպի՝ իր փոխարինիչով (բացառությամբ սերուցքաբուսական սփրեդների) փոխարինումը նախատեսող տեխնոլոգիային համապատասխան կաթ պարունակող մթերքների արտադրության ընթացքում կաթնային ճարպի փոխարինիչի օգտագործման մասին տեղեկատվությունն ընդգրկվում է սպառողական փաթեթվածքի դիմերեսին դրոշմված՝ կաթ պարունակող մթերքի տեսակի անվանման մեջ (կաթ պարունակող մթերքի անվանմանը հաջորդում են հետևյալ բառերը՝ «կաթնային ճարպի փոխարինիչով»), օրինակ՝ «թթվասերային մթերք՝ կաթնային ճարպի փոխարինիչով», «պանրիկ՝ կաթնային ճարպի փոխարինիչով»:

82. Կաթ պարունակող մթերքների համար (բացի թթվեցրած մթերքներից) չի թույլատրվում կաթի, կաթնային մթերքների եւ կաթնային բաղադրյալ մթերքների համար սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված հասկացությունները, այդ թվում՝ այդ հասկացությունների կազմում ընդգրկված բառերը կամ բառերի մասերը, դրանց տարբեր կապակցությունները կաթ պարունակող մթերքները մակնշելիս օգտագործել ապրանքային նշանների (առետրային նշանների) անվանումների մեջ, դրանց պիտակների վրա՝ գովազդային կամ այլ նպատակներով, որոնք կարող են սպառողին շփոթության մեջ գցել:

Կաթ պարունակող մթերքների արտադրության գործընթացում ստացված կաթի վերամշակման կողմնակի մթերքի համար օգտագործվում են «շիճուկային մթերք» եւ «թանից պատրաստված մթերք» անվանումները:

83. Յուղային մածուկի եւ սերուցքաբուսական սփրեդի պիտակների վրա մականշվածք զետեղելիս չի թույլատրվում օգտագործել «յուղ» հասկացությունը, այդ թվում՝ ապրանքային նշանների (առետրային նշանների) անվանումներում՝ գովազդային կամ այլ նպատակներով, որոնք կարող են սպառողին շփոթության մեջ գցել:

Սերուցքաբուսական հալած խառնուրդի պիտակի վրա մականշվածք զետեղելիս չի թույլատրվում օգտագործել «հալած յուղ» հասկացությունը, այդ թվում՝ ապրանքային նշանի (առետրային նշանի) անվանման մեջ՝ գովազդային

կամ այլ նպատակներով, որոնք կարող են սպառողին շփոթության մեջ գցել:

84. Կաթնային պաղպաղակի, սերուցքային պաղպաղակի, պլոմբիրի, թթվակաթնային պաղպաղակի, կաթնային ճարպի փոխարինիչով պաղպաղակի մականշվածքը պետք է պարունակի նշված արտադրանքի անվանումը, որը համապատասխանում է սույն Տեխնիկական կանոնակարգի II բաժնով սահմանված հասկացություններին: Պաղպաղակի վրա մականշվածք գետեղելիս սպառողական փաթեթվածքի դիմերեսին նշվում է այդ արտադրանքի լրիվ անվանումը, որը դրոշմվում է միեւնոյն չափի տառատեսակով:

Այն պաղպաղակի մականշվածքի անվանման մեջ, որի բաղադրության մեջ առկա է կաթնային ճարպի փոխարինիչ, չի թույլատրվում «կաթնային», «սերուցքային», «պլոմբիր» հասկացությունների կիրառությունը:

85. Որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձանց, իրավաբանական անձանց կողմից վերամշակման համար իրացվող հում կաթը, հում յուղագերծված կաթը, հում սերուցքը պետք է ուղեկցվեն ապրանքաուղեկից փաստաթղթերով, որոնք պարունակում են հետեւյալ տեղեկատվությունը՝

ա) անվանումը (հում կաթ, հում յուղագերծված կաթ, հում սերուցք).

բ) սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 6 եւ 7 հավելվածներով սահմանված նույնականացման ցուցանիշները՝ դրանց որոշման հնարավորության դեպքում.

գ) հում կաթ, հում յուղագերծված կաթ, հում սերուցք պատրաստողի անվանումը եւ գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ երկիրը, հում կաթի, հում յուղագերծված կաթի, հում սերուցքի արտադրության վայրի հասցեն (իրավաբանական հասցեի հետ չհամընկնելու դեպքում)).

դ) հում կաթի, հում յուղագերծված կաթի, հում սերուցքի ծավալը (լիտրով) կամ զանգվածը (կիլոգրամով).

ե) հում կաթի, հում յուղագերծված կաթի, հում սերուցքի բեռնառաքման

ամսաթիվը եւ ժամանակը (ժամ, րոպե).

զ) ջերմաստիճանը հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի բեռառաքման ժամանակ ( $^{\circ}\text{C}$ ).

է) հում կաթի, հում յուղազերծված կաթի, հում սերուցքի խմբաքանակի համարը:

86. Կաթի վերամշակումից ստացվող մթերքի սպառողական փաթեթվածքի վրա պետք է զետեղվի հետտեսյալ տեղեկատվությունը պարունակող մականշվածք՝

ա) կաթի վերամշակումից ստացվող մթերքի անվանումը (սույն Տեխնիկական կանոնակարգի II բաժնով եւ X բաժնի դրույթներով սահմանված հասկացություններին համապատասխան՝ կատարելով դրանց կիրառմանը ներկայացվող՝ սույն բաժնով սահմանված պահանջները).

բ) ճարպի զանգվածային բաժինը (տոկոսներով) (բացի յուղազերծված մթերքներից, պանրից, պանրամթերքից, հալած պանիրներից, հալած պանրամթերքից),

չոր նյութերում ճարպի զանգվածային բաժինը (տոկոսներով) պանրի, պանրամթերքի, հալած պանիրների, հալած պանրամթերքի համար:

Անքաշ կաթից արտադրված մթերքների համար թույլատրվում է «...-ից մինչեւ ...» տիրույթում տոկոսներով նշել ճարպի զանգվածային բաժինը՝ ճարպի զանգվածային բաժնի որոշակի արժեք ունեցող յուրաքանչյուր խմբաքանակի համար հստակ տեսանելի լրացուցիչ մականշվածքով՝ ցանկացած հարմար եղանակով:

Չոր կաթնային ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդների, չոր թթվակաթնային խառնուրդների, վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային ըմպելիքների, օգտագործման համար պատրաստի կաթնային շիլաների եւ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված չոր կաթնային շիլաների համար (որոնք տնային պայմաններում խմելու ջրի

օգնությամբ հասցվում են պատրաստի վիճակի) թույլատրվում է ճարպի զանգվածային բաժինը «Սննդային արժեք» բաժնում զետեղված մակնշման տեքստում նշել գրամներով.

գ) կաթնային ճարպի զանգվածային բաժինը (ճարպային ֆազի տոկոսներով) (կաթ պարունակող մթերքների համար).

դ) կաթի վերամշակումից ստացվող մթերքները պատրաստողի եւ պատրաստողի կողմից՝ Մաքսային միության տարածքի սպառողներից դժգոհություններն ընդունելու համար լիազորված՝ Մաքսային միության տարածքում գրանցված կազմակերպության անվանումն ու գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն՝ ներառյալ երկիրը, կաթի վերամշակումից ստացվող մթերքների արտադրության վայրի հասցեն (իրավաբանական հասցեի հետ չհամընկնելու դեպքում)).

ե) ապրանքային նշանը (առետրային նշանը) (առկայության դեպքում).

զ) կաթի վերամշակումից ստացվող մթերքի զուտ զանգվածը կամ ծավալը (սպառողական փաթեթվածքի՝ ընթերցելու համար հարմար հատվածում).

է) կաթի վերամշակումից ստացվող մթերքի բաղադրությունը՝ նշելով դրա բաղադրության մեջ մտնող բաղադրիչները: Այն դեպքում, երբ որպես բաղադրիչ հանդես է գալիս երկու կամ ավելի բաղադրիչներից բաղկացած սննդամթերքը, այդ սննդամթերքը նշվում է մակնշման տեքստի «Բաղադրություն» բաժնում՝ իր անվանման տակ:

Կաթնային բաղադրյալ մթերքի եւ (կամ) կաթ պարունակող մթերքի բաղադրության մեջ մտնող կաթնային մթերքը նշվում է մակնշման տեքստի «Բաղադրություն» բաժնում՝ իր անվանման տակ: Այդ արտադրանքի բաղադրության մեջ նշվում են սննդամթերքի անվանումները, սննդային հավելումները (խմբի անվանումը եւ անվանումը կամ «E» ցուցիչը, արտադրության գործընթացում օգտագործվող, սակայն պատրաստի մթերքի բաղադրության մեջ չմտնող ֆունկցիոնալ բաղադրիչները թույլատրվում է չնշել),

բուրավետիչները (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2012 թվականի հուլիսի 20-ի թիվ 58 որոշմամբ ընդունված «Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 029/2012) պահանջներին համապատասխան (այսուհետ՝ «Սննդային հավելումների, բուրավետիչների եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 029/2012))): Ջնարակի բաղադրության մեջ մտնող բաղադրիչները նշվում են մակնշման տեքստի «Բաղադրություն» բաժնում՝ հաշվի առնելով բաղկացուցիչ մասերին ներկայացվող պահանջները:

Բազմաբաղադրիչ սննդամթերք հանդիսացող կաթնամթերքի մասին տեղեկատվության շարադրման կարգը սահմանվում է «Սննդամթերքի մակնշման մասին» (ՄՄ ՏԿ 022/2011) եւ «Սննդային հավելումներին, բուրավետիչներին եւ տեխնոլոգիական օժանդակ միջոցներին ներկայացվող պահանջները» (ՄՄ ՏԿ 029/2012) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան.

ը) կաթի վերամշակումից ստացվող այն մթերքների սննդային արժեքը (սննդային արժեքը թույլատրվում է նշել «...-ից մինչեւ ...» տիրույթում), որոնք պատրաստվել են անքաշ կաթից.

թ) միկրոօրգանիզմների (1 գրամ մթերքում գաղութ առաջացնող միավորների կաթնաթթվային, բիֆիդոբակտերիաների եւ այլ պրոբիոտիկ միկրոօրգանիզմների, ինչպես նաեւ խմորասնկերի (մերանների բաղադրության մեջ խմորասնկերի առկայության դեպքում)) պարունակությունը պատրաստի թթվակաթնային մթերքում կամ թթվեցրած մթերքում (թթվեցնելուց հետո չի ենթարկվում ջերմամշակման).

ժ) պատրաստի հարստացված մթերքում միկրո- եւ մակրոտարրերի, վիտամինների, մթերքի հարստացման համար օգտագործվող այլ նյութերի պարունակությունը՝ նշելով մթերքում ավելացված նյութերի քանակության հարաբերակցությունը սպառման օրական չափաքանակի հետ (սպառման



չափաքանակի՝ սահմանված կարգով կանոնակարգված ցուցանիշի առկայության դեպքում) եւ մթերքի օգտագործման առանձնահատկությունները (անհրաժեշտության դեպքում)։

ժա) փաստաթուղթը, որի համաձայն արտադրվել եւ կարող է նույնականացվել արտադրանքը (երրորդ երկրից Մաքսային միության տարածք ներմուծվող արտադրանքի համար թույլատրվում է չնշել)։

87. Կոնցենտրացված կամ խտացրած կաթնամթերքի եւ չոր կաթնամթերքի մականշվածքը պետք է պարունակի հետեւյալ լրացուցիչ տեղեկատվությունը՝

ա) մթերքի արտադրության (պատրաստման) ամսաթիվը եւ պիտանիության ժամկետը (զետեղվում է բանկայի կամ տուփի կափարիչի վրա կամ ներքեի հատվածում)։ Պիտանիության ժամկետը «պիտանի է մինչեւ» կամ «օգտագործել մինչեւ» բառերով նշելու դեպքում այդ բառերի կողքին նշվում է այն վայրը, որտեղ զետեղվել է այդ տեղեկատվությունը, օրինակ՝ «նայիր բանկայի կափարիչի վրա կամ ներքեի հատվածում՝ առաջին կամ երկրորդ շարքում» կամ «նայիր տուփի կափարիչի վրա կամ ներքեի հատվածում»։ Պիտանիության ժամկետը «պիտանի է ... ընթացքում» կամ «օգտագործել մինչեւ» բառերով նշելիս այդ բառերի կողքին զետեղվում է պիտանիության ժամկետը (ամիսը) եւ գրառում՝ «արտադրության ամսաթիվը նշված է բանկայի կափարիչի վրա կամ ներքեի հատվածում՝ առաջին կամ երկրորդ շարքում» կամ «արտադրության ամսաթիվը նշված է տուփի կափարիչի վրա կամ ներքեի հատվածում»։

բ) կաթի վերամշակումից ստացվող՝ շաքարով կոնցենտրացված (խտացրած) մթերքների համար նախատեսված շաքարի տեսակները (սախարոզա, ֆրուկտոզա, գլյուկոզա, լակտոզա) (նշվում է մականշման տեքստի «Կաթի վերամշակումից ստացվող մթերքի բաղադրություն» բաժնում)։

88. Մականշվածքը զետեղելիս թույլատրվում է տեղեկատվությունը դրոշմել պանրի, պանրամթերքի թաղանթի կամ դրա ծածկույթի վրա՝ կիրառելով չջնջվող

անվտանգ ներկեր կամ ինքնակաշուն պիտակներ, կամ այլ եղանակով, որով ապահովվում է բաց թողնվող արտադրանքի անվտանգությունը:

89. Պանրի, պանրամթերքի մականշվածքը պետք է պարունակի հետևյալ լրացուցիչ տեղեկատվությունը՝

ա) հիմնական մերանային միկրոֆլորայի տեսակը (պատրաստողը կազմում է մականշման տեքստը).

բ) կաթ մակարդող ֆերմենտային պատրաստուկների առաջացման բնույթը:

90. Մանկական սննդի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի X բաժնով սահմանված պահանջներին համապատասխանող՝ վաղ տարիքի երեխաների սննդի համար նախատեսված մթերքների մականշվածքը պետք է պարունակի հետևյալ լրացուցիչ տեղեկատվությունը՝

ա) համապատասխան մթերքի օգտագործման վերաբերյալ խորհուրդներ.

բ) համապատասխան մթերքի պատրաստման, պահման եւ օգտագործման պայմանները սպառողական փաթեթվածքը բացելուց հետո.

գ) երեխայի տարիքը (նշվում է թվերով՝ առանց բառերը կրճատելու), որի համար նախատեսված է համապատասխան մթերքը.

Ճննդյան օրվանից՝ ադապտացված կամ մասամբ ադապտացված ելակետային կաթնային խառնուրդներ (այդ թվում՝ չոր եւ մասամբ ջրատարրալուծված սպիտակուցների հիմքով), չոր թթվակաթնային խառնուրդներ,

6 ամսականից բարձր (սկսած 6 ամսականից)՝ ադապտացված կամ մասամբ ադապտացված հետագա օգտագործման կաթնային խառնուրդներ (այդ թվում՝ չոր), չոր թթվակաթնային խառնուրդներ,

6 ամսականից բարձր (սկսած 6 ամսականից)՝ կաթնային ըմպելիքներ (այդ թվում՝ չոր)՝ վաղ տարիքի երեխաների համար, կաթնաշոռ եւ կաթնաշոռի հիմքով մթերքներ,

8 ամսականից բարձր (սկսած 8 ամսականից)՝ խմելու կաթ (թույլատրվում է օգտագործել վաղ տարիքի՝ 4 ամսականից բարձր (սկսած 4 ամսականից) երեխաների հավելյալ սննդի համար նախատեսված ուտեստների պատրաստման համար՝ մականշվաձքում նշելով տարիքային սահմանափակումը մթերքի նպատակային նշանակման դեպքում),

8 ամսականից բարձր (սկսած 8 ամսականից)՝ խմելու սերուցք (թույլատրվում է օգտագործել վաղ տարիքի՝ 6 ամսականից բարձր (սկսած 6 ամսականից) երեխաների հավելյալ սննդի համար նախատեսված ուտեստների պատրաստման համար՝ մականշվաձքում նշելով տարիքային սահմանափակումը մթերքի նպատակային նշանակման դեպքում),

8 ամսականից բարձր (սկսած 8 ամսականից)՝ կեֆիր, յոգուրտ եւ այլ թթվակաթնային մթերքներ.

դ) մթերքի բաղադրությունը (նշելով օգտագործված բուսական յուղերի եւ ածխաջրերի անվանումները).

ե) մթերքի սննդային արժեքը՝ ներառյալ վիտամինների, հանքային նյութերի պարունակությունը եւ էներգետիկ արժեքը (մթերքի հարստացման դեպքում՝ օրական սպառման տոկոսները):

91. Աղապտացված կամ մասամբ աղապտացված ելակետային կամ հետագա օգտագործման կաթնային խառնուրդների (այդ թվում՝ չոր) փաթեթվածքների վրա պետք է զետեղվի նախազգուշացնող գրառում՝ «Վաղ տարիքի երեխաների սննդի համար նախընտրելի է կրծքով կերակրումը»: Մայրական կաթի փոխարինիչների մականշվաձքը չպետք է պարունակի երեխաների պատկերներ:

92. Նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների սննդի համար նախատեսված մյուս կաթնային մթերքների, կաթնային բաղադրյալ մթերքների եւ կաթ պարունակող մթերքների մասին տեղեկատվությունը պետք է համապատասխանի սույն Տեխնիկական կանոնակարգի 86-րդ կետով

սահմանված պահանջներին:

93. Կաթնամթերքի՝ դրա փաթեթվածքի կամ պիտակի վրա զետեղված մականշվածքում նշված սննդային արժեքի ցուցանիշների՝ այդպիսի արտադրանքի սննդային արժեքի իրական ցուցանիշներից շեղումների թույլատրելի մակարդակները չպետք է գերազանցեն սույն Տեխնիկական կանոնակարգի թիվ 16 հավելվածով սահմանված թույլատրելի մակարդակները: Կաթնամթերքի սննդային արժեքի ցուցանիշները պետք է սահմանվեն հայտնի արժեքների հիման վրա հաշվարկային մեթոդով ստացված միջին կշռված արժեքների կամ պատրաստողի կողմից կաթնամթերքի հետազոտության (փորձարկման) ընթացքում ստացված կամ հաշվարկային մեթոդով պաշտոնական աղբյուրներից վերցված աղյուսակային արժեքների հիման վրա կամ օգտագործվող բաղադրիչների սննդային արժեքի ցուցանիշների վերլուծության ընթացքում հաշվարկային մեթոդով ստացված միջին կշռված արժեքի հիման վրա:

94. Հարստացված կաթնամթերքում օգտագործված նյութերի քանակը նշվում է՝ հաշվի առնելով իր պիտանիության ժամկետի ավարտին նշված արտադրանքում դրանց պարունակությունը: Ինչ վերաբերում է կաթնամթերքում իր պիտանիության ժամկետի ընթացքում վիտամինների քանակի՝ բնական եղանակով նվազեցմանը, այդպիսի արտադրանք արտադրելիս թույլատրվում է դրանում ավելացնել վիտամինների պարունակությունը, սակայն ոչ ավելի, քան 50 տոկոսով՝ ճարպալույծ վիտամինների համար, եւ ոչ ավելի, քան 100 տոկոսով՝ ջրալույծ վիտամինների համար՝ հայտարարագրված ցուցանիշների հարաբերակցությամբ:

95. Մթերքի անվանումը նշվում է սպառողական փաթեթվածքի դիմերեսին՝ օգտագործելով 9,5 կեգելից ոչ պակաս՝ միեւնույն չափի տառատեսակ, 100 մլ (գ)-ից պակաս ծավալով կամ զանգվածով սպառողական տարայի վրա՝ օգտագործելով 8,5 կեգելից ոչ պակաս՝ միեւնույն չափի տառատեսակ:

96. Մթերքի սպառողական փաթեթվածքի մականշվածքի վրա անհրաժեշտ տեղեկատվությունն իր ամբողջ ծավալով զետեղելու անհնարինության դեպքում

տեղեկատվության մի մասը պետք է զետեղվի ներդիր թերթիկի վրա (բացառությամբ մթերքի անվանման, ճարպի զանգվածային բաժնի արժեքների, մթերքի զուտ զանգվածի կամ ծավալի, դրա պատրաստման ամսաթվի ու պիտանիության ժամկետի, պատրաստողի անվանման), իսկ այդ մթերքի սպառողական փաթեթվածքի վրա պետք է զետեղվի գրառում՝ «Լրացուցիչ տեղեկություն՝ տես ներդիր թերթիկը»:

### XIII. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը

97. Կաթի եւ կաթնամթերքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգին համապատասխանությունն ապահովվում է դրա պահանջների, ինչպես նաեւ Մաքսային միության այն մյուս տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարմամբ, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

98. Հետազոտության (փորձարկման) եւ չափման մեթոդները սահմանվում են ստանդարտներով՝ համաձայն Ստանդարտների ցանկի, որոնք պարունակում են սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները կիրառելու եւ կատարելու, ինչպես նաեւ սննդամթերքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ:

### XIV. Կաթի եւ կաթնամթերքի համապատասխանության գնահատումը (հավաստումը)

99. Կաթի եւ կաթնամթերքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատումը (հավաստումն) իրականացվում է հետեւյալ ձեւով՝

ա) համապատասխանության հայտարարագրում.

բ) մանկական սննդի համար նախատեսված մթերքների պետական

գրանցում՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին համապատասխան.

գ) նոր տեսակի կաթնամթերքի պետական գրանցում՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) դրույթներին համապատասխան.

դ) հետագա վերամշակման նպատակով ձեռնարկություն մատակարարվող հում կաթի, հում յուղազերծված կաթի եւ հում սերուցքի անասնաբուժասանիտարական փորձաքննությունը:

100. Սույն Տեխնիկական կանոնակարգի 99-րդ կետի «բ»-ից «դ» ենթակետերում նշված եւ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատման (հավաստման) ենթարկված արտադրանքի համար չի պահանջվում համապատասխանության մասին հայտարարագրի ընդունում:

101. Ոչ արդյունաբերական պատրաստման կաթի եւ կաթնամթերքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

102. Կաթնամթերքի արտադրության (պատրաստման) ընթացքում հում կաթի, հում սերուցքի եւ հում յուղազերծված կաթի ընդունման եւ (կամ) դրանց վերամշակման հետ կապված արտադրության գործընթացի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացվում է մինչեւ այդ գործընթացներն իրականացնելը (մինչեւ արտադրանքը շրջանառության մեջ դնելը)՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին համապատասխան արտադրական օբյեկտների պետական գրանցման ձեռով:

103. Կաթի եւ կաթնամթերքի արտադրության, պահման, փոխադրման եւ իրացման գործընթացների՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին

համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացվում է պետական հսկողության (վերահսկողության) ձեռով:

104. Հում կաթի, հում յուղագերծված կաթի եւ հում սերուցքի համապատասխանության գնահատումը (հավաստումը) իրականացվում է սույն Տեխնիկական կանոնակարգի եւ «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 021/2011) պահանջներին համապատասխան անասնաբուժասանիտարական փորձաքննության ձեռով:

Անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթակա չեն՝

հում կաթը, հում յուղագերծված կաթը եւ հում սերուցքը՝ մեկ արտադրական օբյեկտի սահմաններում եւ մեկ տնտեսավարող սուբյեկտի արտադրական տարածքների միջեւ դրանց փոխադրման (տեղափոխման) ժամանակ,

